Azg Ազգ

6 ՓԵՏՐՈՒԱՐ 2008 ՇԱԲԱԹ 22 (3916)

Մոսկվայում ձերբակալվել է սինհեդների խումբ

Մոսկվայի ոստիկանությունը ձերբակալել է մոտ 20 մարդու սպանության մեջ մեղադրվող 4 երիտասարդի: Խումբը ղեկավարել է 18-ամյա եկաբերին-բուրգցի Արթուր Ռինոն, որը ձերբակալվել էր անցած տարվա աորիլին՝ հայազգի բիզնեսմեն Կարեն Աբրահամյանի սպանության կասկածանքով: Ոստիկանության խոսնակ Միխայիլ Յոնկինը հայտնել է, որ ենթադրությամբ զոհերի թիվը կարող է աճել: Կարեն Աբրահամյանը, որի սպանության մեջ մեղադրվում է Ռինոն, դանակահարվել էր աորիլի կեսերին Մոսկվայի Հարավարևմտյան օկրուգում:

2007 թվականին ազգային հողի վրա կատարված հարձակումներից Ռուսաստանում սպանվել է 67 մարդ:

Ինչո՞ւ են ծախսում իրենց միլիոնները նախագահի թեկնածուները

ՄԱՐԻՆԵՍԻ ԽՈՍՔԵՍՅԱՆ

Քվեարկությունից 14 օր առաջ ԿԸՀ-ում հավաքված լրագրողները երեկ փորձում էին մինչեւ ԿԸՀ նախագահ **Գարեգին Ազարյանի** հայտնվելը կենսաակ-կենսուրջ ենթադրություններ անել, թե նախագահի թեկնածուներից ովքեր հանած կլինի իր թեկնածությունը, որի մասին գուցե ԿԸՀ նախագահը պետք է հայտարարություն անի: Բայց այդպիսի բան չեղավ, եւ մինչեւ թեկնածություն հանելու վերջին ժամկետը՝ փետրվարի 9, այդպիսի բան, երեւում է, տեղի չի էլ ունենա:

ԿԸՀ նախագահը հայտնեց, որ շարունակվում է ընտրատեղամասային հանձնաժողովների անդամների ուսուցումը՝ մինչեւ երեկ նրանց 55 տոկոսը «ուսումը» սացել-հարկավոր գիտելիքներով զինվել է, մնացածների ուսուցումը շարունակվելու է՝ Գ. Ազարյանը գովելի համարեց միջազգային կառույցների հետ համագործակցությունն այդ ուղղությամբ:

Սակայն Ազարյանի ասուլիսի առավել հետաքրքրական հատվածը վերաբերում էր թեկնածուների հիմնադրամներին եւ դրանցից առդեն կատարված ծախսերին: Ի դեպ, այդ ծախսերի մասին առաջին հաղորդումը, ըստ ընտրական օրենսգրքի, թեկնածուները պետք է ներկայացնեին քարոզչությունը սկսելու տասներորդ օրը, սակայն այդ ժամկետները մեր թեկնածուներն առանձնապես չեն պահպանել: Երկու թեկնածու՝ Արթուր Բաղդասարյանն ու Տիգրան Կարապետյանը ժամկետից շուտ են հաղորդում ներկայացրել, Լեւոն Տեր-Պետրոսյանը 1 օր ուշ է հայտարարագրել ծախսածը, Արման Մելիքյանն ու Արամ Հարությունյանը՝ միայն երեկ:

Տես էջ 2

Եվրոհանձնաժողովի գրասենյակ Երեւանում

Երեկ արտաքին հարաբերությունների եւ եվրոպական հարեւանության խաղախականության հարցերով եվրոպական հանձնակատար Բենիտա Ֆերերո-Վալդներն եւ Հայաստանի արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի հետ բացեցին Հայաստանում եվրոպական հանձնաժողովի (ԵՀ) պատվիրակության նոր շենքը, որտեղ այսուհետեւ կգործի ԵՀ լիարժեք պատվիրակությունը:

Ինչպես իրենց ելույթներում նշեցին տիկին Ֆերերո-Վալդները եւ պրն Օսկանյանը, լիարժեք պատվիրակության բացումը լավ հնարավորություն է սերտացնելու համագործակցությունը Եվրոմիության հետ: Այդ համագործակցությունը ավելի սերտ է դարձել 2006 թվականի վերջին Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի կողմից եվրոպական հարեւանության խաղախականության գործողությունների ծրագրերի ընդունմամբ: Ըստ այդմ, Ադրբեջանին տրամադրվելիք գումարը կազմում է 92 մլն եվրո, Հայաստանին՝ 98,4մլն, Վրաստանին՝ 120 մլն:

Ա. Հ.

ԱՄՆ-ը Հայաստանին առաջարկում է 24 մլն դոլարի օգնություն

Ամերիկայի հայկական համագումարը իր անհամաձայնությունն է հայտնել ԱՄՆ-ի վարչակազմի 2009-ի ֆինանսական տարվա առաջարկված բյուջեում Հայաստանին տրամադրվելիք 24 մլն դոլարի տնտեսական օգնությանը, ինչը, ըստ հաղորդագրության, 11 մլն դոլարով փոքր է, քան վարչակազմի 2008-ի առաջարկածը եւ 34 մլն-ով փոքր է Կոնգրեսի հաստատած օգնությունից: Համագումարը նաեւ իր դժգոհությունն է հայտնել, որ Հայաստանին եւ Ադրբեջանին առաջարկվել է ոչ համալափ ռազմական օգնություն:

Ինչ է առաջարկում «Ուկրֆերին» հայ փոխադրողներին

Հայաստանում Ուկրաինայի դեսպանության առաջարկով, Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միությունը (ՀԱԳՄ) երեկ կլոր սեղան էր կազմակերպել, որին մասնակցում էին Փոթի-Իլիչովսկ (Ուկրաինա) լաստանավային փոխադրումներ իրականացնող «Ուկրֆերի» ընկերության եւ Հայաստանի բեռնափոխադրող ընկերությունների ներկայացուցիչները: Ինչպես լրագրողներին հայտնեց ՀԱԳՄ նախագահ **Արսեն Դաբաղյանը**, ուկրաինական կողմն առաջարկել է նոր բեռնարկղային (կոնտեյներային) փոխադրման տարբերակ Փոթի-Իլիչովսկ ուղիով: Դա, ըստ ՀԱԳՄ նախագահի, պայմանավորված է առանձին ճգնաժամային իրավիճակներում երկաթուղային լաստանավով փոխադրումների անհնարինությամբ, ինչը պատահեց մի քանի ամիս առաջ: Սակայն որքանով դա արդյունավետ կլինի, ըստ հայ գործարարի, ցույց կտա ժամանակը: Բանն այն է, որ ներկայումս բեռնափոխադրումների ամենակա ժամանակը: Բանն այն է, որ ներկայումս բեռնափոխադրումների ամենաշատ տարբերակը երկաթուղային լաստանավային անցումն է: Երեկվա հանդիպման նպատակն էլ այն է, որ ենթադրվի «թե ինչպես անենք, որ բեռնարկղային փոխադրումներն ավելի էժան լինեն»:

Ա. Ս.

Դատախազությունը դիմել է ՕԵԿ-ին

Գլխավոր դատախազությունը տարածել է հաղորդագրություն, որ դիմել է նախագահի թեկնածու Արթուր Բաղդասարյանին, խնդրելով տրամադրել ինչ-որ անձանց կողմից ընտրակաշառներ բաժանելու վերաբերյալ իր տրամադրության տակ գտնվող նյութերը, որոնց մասին հայտարարել էր նա կիրակի օրը, Ազատության հրապարակում կայացած հանդիպմանը: Դատախազության տարածած հաղորդագրության մեջ նշվում է նաեւ, որ մեկ այլ գրությամբ ՀՀ գլխավոր դատախազությունը դիմել է Արթուր Բաղդասարյանի նախընտրական շտաբի պետ Հերմոն Բիշարյանին, խնդրելով տրամադրել հանդիպումների տարբեր խաղաքներում նախապատրաստվող զանգվածային կենտիլների մասին իր ունեցած տվյալները:

Ազատության հրապարակում տեղի ունեցած հանդիպման ժամանակ, ՏԼՍ-ների հրապարակումների համաձայն, Հ. Բիշարյանը հայտարարել է, որ գործարար Սամվել Ալեքսանյանն առդեն իսկ բացել է փողի տոպրակը եւ ընտրակաշառներ է բաժանում:

ԱՐՏԱԲԵՐ ՄԵՔՆԱՍՏՈՒԹՅՈՒՆ

«Եվ նորից Բերեզովսկու ականջները»

Նման վերնագրով «Крымское Эхо» կայքի լրագրող Վիկտոր Կովալենկոն անդրադարձել է Հայաստանում տեղի ունեցող ընտրություններին: Ըստ կայքէջի, Անգլիայում ապրող հայտնի օլիգարխ Բորիս Բերեզովսկին ակտիվորեն ներգրավված է հայաստանյան ընտրությունների մեջ: Այսպես, թերթը գրում է, որ մեկ տարի առաջ Կիեւում հանդիպում է տեղի ունեցել ՀՀԾ-ի առաջնորդների եւ Բերեզովսկու կողմից ֆինանսավորվող «Քաղաքացիական ազատություններ» հիմնադրամի ղեկավար Ալեքսանդր Գոլդֆարբի միջեւ: Հաղորդվում է, որ հանդիպումը կազմակերպվել է Դավիթ Ժվանիայի միջնորդությամբ: Հոդվածի հեղինակը գրում է, որ ըստ որոշ լուրերի, հանդիպմանը մասնակցել են նաեւ հայաստանյան ուժային նախարարությունների մի քանի ներկայացուցիչներ: Հայաստանում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններից հետո, որը ավարտվեց ընդդիմության ջախջախումով, ըստ հոդվածագրի, նորից ակտիվացան կապերը Բերեզովսկու մարդկանց եւ ՀՀԾ-ականների միջեւ: Վիկտոր Կովալենկոն գրում է, որ այս անգամ հանդիպումը տեղի է ունեցել Ֆրանսիայում, որտեղ, ըստ հեղինակի, իբր գտնվում է նաեւ Լեւոն Տեր-Պետրոսյանի որդի՝ Դավիթի «գալաթը գոլֆի դասընթաց»: Ըստ հոդվածագրի հանդիպումը այս անգամ կայացել է Ֆրանսիայի ափամերձ շրջաններից մեկում՝ մի հայ մեծահարուստի զբոսանավի վրա: Ըստ Վիկտոր Կովալենկոյի, Բերեզովսկին լավ հասկանալով, որ փետրվարյան ընտրությունները Հայաստանում իշխանությունը վերցնելու վերջին հնարավորությունն են, Տեր-Պետրոսյանին խորհուրդ է տվել փորձել ուժային տարբերակը՝ «բարդջանների հեղափոխությունը»: Հոդվածի հեղինակը գրում է, որ փետրվարի 20-21-ին ՀՀԾ-ի առաջնորդությամբ երեւանի փողոցներ դուրս կգան «կեղծված» ընտրություններից դժգոհ զանգվածները, որոնց հնարավոր է, որ աջակցեն զինվորական եւ ոստիկանական որոշ ստորաբաժանումներ: «Крымское Эхо»-ի լրագրողը գրում է, որ ուժայիններին շահագրգռելու համար արդեն 7 մլն դոլար է փոխանցվել համապատասխան հաշվեհամարին, որի մասին իբր թե իր կողմնակիցներին հայտնել է առաջին նախագահի շտաբի պետ Ալեքսանդր Արզումանյանը: Կայքէջը գրում է նաեւ, որ գումարը փոխանցվել է ինչ-որ «իսրայելական ճանապարհով», ոմն Լյուդմիլայի անունով:

Ինչեւէ, ներկայացնելով այս հոդվածը՝ «Ազգը» չի ընդունում այն որպես վերջին ճշմարտություն, սակայն իր պարտքն է համարում ընթերցողներին ներկայացնել նաեւ այս տեսակետը: Թերթը պատրաստ է հրապարակել այդ տեսակետը հերքող շահագրգիռ կողմերի կարծիքը: Հոդվածը ամբողջությամբ կարող եք կարդալ http://www.krekho.info/index.php?name=News&op=article&sid=474 կայքէջում կամ «Ազգ»-ի կայքէջի ռուսերեն տարբերակում՝ www.azg.am/RU/:

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Ո՞վ կդատի կատառակեր դատավորին

«Դատավորները, որոնք իրենք են ափխաել դատական օրենսգրքի վրա, 13-րդ հոդվածի 6-րդ կետով խանդում են առդարադատության հիմքերն ամբողջ Հայաստանում եւ իրենք իրենց ոչաբտությունում են երեսական ոչաբտությունից», կարծում է այս հոդվածի դեմ միայնակ դուրս եկած փաստաբան **Ռուզաննա Տեր-Վարդանյանը**: Նա արդեն դիմել է նախագահին, վարչապետին եւ մարդու իրավունքների ոչաբտությանը, նաեւ Փաստաբանների պալատի նախագահին: Նրա կարծիքով է, որ ոչաբտությունները կամ պալատը, որոնց կոչումը, դիմեն վերոհիշյալ ոչաբտությունների, որոնցից նրանք ստանում են հարցի լուծմամբ, այն է՝ Սահմանադրական դատարան մտնեն հայցով, որպեսզի հակասահմանադրական ճանաչվի վերոհիշյալ հոդվածը, որն ասում է. «Դատավորի կողմից ատադիտական կամ անձնական այլ դրդումներով ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու փաստի առթիվ երեսական հետաքննություն չի կարող իրականացվել, եթե այդ ակտը վերադաս դատարանի կողմից բեկանված չէ»: Բնականաբար, վերադաս դատարանն էլ ստորադաս դատարանի «որոշը կոխ չտալու» տրամաբանությամբ չի բեկանում ակնհայտ սխալ որոշումը, վճիռը կամ դատավճիռը: Եվ սրանից էլ բխում է այն հանգամանքը, որ որեւէ դատավոր մինչ օրս երեսական ոչաբտության չի ենթարկվել Հայաստանում: Սակայն սա դեռ չի նշանակում, որ մեր դատարանն ափխարհի ամենաարդար դատարանն է եւ մեր դատավորներն էլ երդյալ արդարադատեր են: Համենայն դեպս Ռ. Տեր-Վարդանյանը վստահորեն հակառակն է պնդում: Ինչեւէ: Իրեն հուզող 13-րդ հոդվածի 6-րդ կետի հետ կապված Ռուզաննա Տեր-Վարդանյանն ասում է, որ իր բազմաթիվ դիմումներից որեւէ մեկի գործնական ոչաբտությանը դեռ չի ստացել: «Ես մամուլի միջոցով ցանկանում եմ դիմել վարչապետ Սերժ Սարգսյանին: Պարոն վարչապետ, իմ դիմումները, որոնք ուղարկել եմ Ձեզ դատական օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ կետը Սահմանադրական դատարան դիմելու միջոցով հակասահմանադրական ճանաչելու համար, Ձեզ ուղղակի ցույց չեն տալիս, չեն զեկուցում: Մամուլի միջոցով մեկ անգամ ես խնդրում եմ Ձեզ, դիմել սահմանադրական դատարան՝ հակասահմանադրական ճանաչել 13-րդ հոդվածի 6-րդ կետը, եթե այդ հոդվածի ոչաբտությամբ որեւէ էլ քաղաքացիների իրավունքները ոչաբտվանող, լավ օրենքներ ընդունվեն, դատարանները հաշվի չեն առնի այդ օրենքները եւ կկայացնեն ակնհայտ անարդար վճիռներ, դատավճիռներ եւ որոշումներ: Իսկ փաստաբանական կորոշան ընդհանրապես Հայաստանի հանրապետությունում չի կարողանա ափխաել: Կամ ոչիի դառնա կաբառ փոխանցող, կամ՝ ավելորդ մի մարմին», ասաց «Ազգակի» հյուրը:

«Ազգի» հարցին, թե ինչո՞ւ է բանախոսը միայնակ բողոքում այդ հոդվածից, Ռ. Տեր-Վարդանյանը ոչաբտվանեց. «Առայժմ ես եմ դիմել, որովհետեւ ինձ մոտ է Բաբայանների գործը, որը 6 տարի ինձ մոտ է եւ անարդարության մի գլուխգործոց է: Մյուս փաստաբանները դեռ չեն դիմել, քանի որ ոչեսի է նկատի ունենալ, որ դատական օրենսգիրն ուժի մեջ է մտել հունվարի 1-ից: Պարզապես, երբ վերոհիշյալ գործի հետ կապված իմ դիմումին դատախազությունը ոչաբտվանեց, որ դատավորների նկատմամբ չեմ կարող հարուցել երեսական գործ, քանի որ դատական օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն, իրավունք չունեմ գործ հարուցելու, քանի դեռ որոշումը չի բեկանված վերադաս դատարանի կողմից, հասկացա, որ իրոք արդարադատություն Հայաստանում դեռ չի կայանա, քանի կա այդ հոդվածի կետը: Մինչդեռ ես փորձել եմ երեսական ոչաբտության կանչել բոլոր այն 13 դատավորներին, որոնք երբեմն այսպիսիներում էլ ակնհայտ անարդար վճիռներ են կայացրել Բաբայանների գործով՝ որոշես հիմք ընդունելով ինքնին առ ոչինչ համարվող փաստաթուղթը», ասաց բանախոսը: «Ես 2005 թվականից եմ դիմում, որ երեսական ոչաբտության ենթարկեն ակնհայտ անարդար վճիռներ կայացնող դատավորներին: Ի ոչաբտան, այս տարի հունվարից իմ դիմաց դրվեց օրենքի ուժ ստացած այս հոդվածը», հստակեցրեց փաստաբանը:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հայաստանի 22-րդ բանկը գերմանական «Պրոկրեդիտն» է

Հայաստանում երեկ ոչաբտությունը իր գործունեությունը սկսեց գերմանական «Պրոկրեդիտ» բանկը, որը դարձավ Հայաստանում գործող 22-րդ բանկը: Այդ կապակցությամբ երեկ «Կոնգրես» հյուրանոցում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ նախ ներկայացվեց, թե ինչ է «Պրոկրեդիտ» բանկային խումբը: Այդ մասին խոսեցին բանկի գործադիր տնօրեն **Բերսուլդ Հերցֆելդը** եւ փոխտնօրեն **Ուոլտ Աբրահամյանը**:

Բերսուլդ Հերցֆելդը մասնավորապես նշեց, որ բանկը գործում է ափխարհի 21 երկրներում եւ սոցիալապես ոչաբտվանում է փոքր բիզնեսի եւ հասարակ քաղաքացիների համար: «Պրոկրեդիտ» հայաստանյան բանկի բաժնետերերն են «Պրոկրեդիտ» բանկը՝ 66,6 տոկոս, KfW-ն՝ 16,6 տոկոս, Եվրոբանկը՝ 16,6 տոկոս: Ուոլտ Աբրահամյանն ավելացրեց, որ բանկը Հայաստանում սկսել է գործել երեկվանից: Մինչեւ տարեվերջ կբացի 6 մասնաճյուղ՝ 4-ը Երեւանում, 2-ը մարզերում: «Պրոկրեդիտը» Հայաստանում ոչաբտություն է ավանդներ ներգրավել բոլորից եւ ավանդների չափի նվազագույն սահմանափակում գոյություն չունի: Այն վարկավորելու է մանր, փոքր եւ միջին բիզնեսին: Տարվա ընթացքում նախատեսվում է սկսել նաեւ գյուղատնտեսության վարկավորումը:

Կենտրոնական բանկի նախագահ **Տիգրան Սարգսյանը**, ողջունելով «Պրոկրեդիտ» բանկի Հայաստանում գործունեության սկիզբը, հանդգնում հայտնեց, որ այն եւս նոր կխթանի ֆինանսական միջնորդության զարգացումը, կբերի նոր ճակատագիր եւ մենք իրականում հնարավորություն կունենանք տեսնելու, թե ինչ է նշանակում հաճախորդամետ եւ սոցիալապես ոչաբտվանաստ բանկ: Բանկը նաեւ կխթանի մրցակցությունը բանկային համակարգում:

«Պրոկրեդիտ Հայաստան» բանկի տնօրենների խորհրդի նախագահ **Քրիստոֆ Ֆրայնբագը** այսրոպիսի հետաքրքրաշարժ տեղեկություն հայտնեց՝ «Պրոկրեդիտը» Հայաստանում բացված 22-րդ բանկն է, իսկ Հայաստանը 22-րդ երկիրն է, որտեղ սկսում է գործել բանկը: Նա հավաստիացրեց, որ ձգտելու են տրամադրել թափանցիկ, հետաքրքիր եւ առոչոչ բանկային ծառայություններ՝ «մոիսը դեմերիս»:

Բանկի բացումը Հայաստանում ողջունեց նրա գերմանական բաժնետերերից KfW-ի առաջին փոխնախագահ **Ռոլանդ Զիլերը**, որը անդրադարձավ երկու ֆինանսական կազմակերպությունների համագործակցությանը:

Ա. Մ.

«Փոքի-Կավկազ նոր լաստանավային ուղին չարդարացրեց մեր սպասելիքները»

Խոսելով Փոքի-Կավկազ (Նովոռոսիյսկ, Ռուսաստան) լաստանավային նոր անցման մասին երեկ Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության նախագահ **Արսեն Ղազարյանն** ասաց, որ չարդարացրեց սպասելիքները, որոնք ունեին հայ բեռնափոխադրողները: Պատճառը լաստանավի սեփականատիրոջ ոչ ճկուն գնային քաղաքականությունն է, որը չի բերել մեր ընկերությունների համար փոխադրման ծախսերի այն էժանացմանը, որին նրանք ձգտում էին: Միաժամանակ Արսեն Ղազարյանը նշեց, որ լաստանավն անուղղակի օգնում է արագ փոխադրումներ իրականացնելու առումով եւ ընդհանրապես «լաստանավային փոխադրումներն առայժմ մեր միակ ընդունելի տարբերակն են»: ՀԱԳՄ նախագահը նշեց նաեւ, որ վերոնշյալ լաստանավի հնարավորությունները մեծ չեն: Այն կարող է տեղափոխել առավելագույնը 48 վագոն, իսկ Փոքի-Իլիչյովսկ ուղիով փոխադրումներ իրականացնող լաստանավը՝ 108 վագոն: «Նոր լաստանավերի գործարկումն այդ ուղիներով անհրաժեշտ է, քանի որ բեռնափոխադրումների ծավալներն ավելանում են», նշեց Արսեն Ղազարյանը:

Պատասխանելով այն հարցին, թե իրականությանը համապատասխանո՞ւմ են լուրերը, որ վրացական երկաթուղին որոշել է հայկական բեռների համար վերացնել զեղչերը, ՀԱԳՄ նախագահն ասաց, որ այդպիսի նկատառում վրացական կողմն ունի, բայց պատճառական մոտեցում չկա: Յուրաքանչյուր տարի նման հարց բարձրացվում է, այնուհետեւ Հայաստանի կառավարության ներկայացուցիչները եւ հայ գործարարները բանակցություններ են վարում իրենց վրաց գործընկերների հետ եւ պայմանավորվածություններ ձեռք բերում:

Ա. Մ.

Արման Մելիքյանը թեկնածությունը վաղաժամկետ չի հանի

Միացյալ Նահանգների քաղաքացիներն արտասահմանում գտնվելիս ընտրելու հնարավորություն չեն ունենում, բայց երկրի դիվանագետները չեն զրկվում այդ իրավունքից: Մինչդեռ Հայաստանի դիվանագիտական կորպուսն էլ արտասահմանում գտնվող ՀՀ քաղաքացիների հետ զրկված է ընտրելու իրավունքից: «Հայաստանի դեպքում սա նաեւ բարոյական խնդիր է, ի վերջո երկրի քաղաքացիների զգալի մասն ապրում եւ ափխատում է արտերկրում, նրանում ապրողներին էլ պահում», երեկ «Ուրբաթ» ակումբում ասաց ՀՀ նախագահի թեկնածու Արման Մելիքյանը, որն այդ իրավունքի վերականգնման համար դիմել էր Սահմանադրական դատարան: ՍԴ-ն նրա դիմումը մերժել է: Սակայն դա, նախագահի թեկնածուի կարծիքով, ավարտը չէ: Արման Մելիքյանը գտնում է, որ մարդու իրավունքների պաշտպանն էլ դեռ անելիք ունի. «Սա խնդրի շահարկում չէ, հարցի քաղաքականացման փորձ չէ, այլ արտասահմանում ապրող ՀՀ քաղաքացիների ընտրելու իրավունքը վերականգնելու հնարավորություն»: Այն օգտագործելու ճանապարհը, նախագահի թեկնածուի տեսանկյունից, կարող է լինել նաեւ գործընթացի սկիզբը, այլապես ընտրությունները վիճարկելի կլինեն Արման Մելիքյանի համար:

Այնուամենայնիվ նա նպատակ ունի երկակի չափանիշների ավարտ դնել Հայաստանում եւ այսօր արդեն բացառում է իր թեկնածությունը վաղաժամ հանելու հնարավորությունը: Գալիք 2013 թվականի նախագահական ընտրություններում առաջադրվելու հնարավորությունն էլ կօգտագործի, եթե տեսնի որեւէ քաղաքական ուժ, որն առաջ կխաղի իր մոտեցումներին համահունչ ծրագիր: Բայց այդ դեպքում Արման Մելիքյանը կկանգնի այդ ուժի կողքին, քանի որ առաջադրվելն ինքնանպատակ չէ իր համար:

Այս նախագահական ընտրություններում ո՞ւմ կողքին է իրեն տեսնում՝ Արման Մելիքյանը պատասխանեց. «Թող գա երկրորդ փուլը, կտեսնենք, թե ով ում կողքին կկանգնի»: ՀՀ նախագահի թեկնածուի կարծիքով, առկա բեւեռացումն առավել տպավորիչ է, քան գաղափարական. «Իրական քաղաքական ուժերը կարող են գալ համաձայնության եւ կանխել կեղծիքների իրականացումը եւ ոչ թե հետո առնչվել կեղծիքների փաստին»:

Ն. Պ.

Ինչպե՞ս են ծախսում իրենց միլիոնները նախագահի թեկնածուները

1-ին էջից

Մյուս երեք թեկնածուները ժամանակին հայտարարագրել են իրենց ծախսերը: Նորից հիշեցնենք նախընտրական հիմնադրամների միլիոնները՝ 69 մլն 550 հազ. դրամ Սերժ Սարգսյանի հիմնադրամում է, Վահան Հովհաննիսյանն ունեցել է 45,5 մլն դրամ, Արթուր Բաղդասարյանը՝ 21 մլն 960 հազ., Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ 16 մլն 286,5 հազ., Արտաշես Գեղամյանը՝ 14,6 մլն, Վազգեն Մանուկյանը՝ 2.612.000, Տիգրան Կարապետյանը՝ 600 հազ., Արամ Հարությունյանը՝ 190 հազ. դրամ: Բացառիկ անդրադարձ է Արման Մելիքյանը: Իսկ ահա հիմնադրամային այս հիերարխիան խախտվել է արդեն ծախսերի հայտարարագրերում. մինչեւ այժմ ծախսածի գծով առաջին հորիզոնականում Վահան Հովհաննիսյանն է՝ 44 մլն. 144 հազ. դրամով, Սերժ Սարգսյանը գոնե հայտարարագրով ծախսել է 26 մլն 284 հազ. դրամ: Արթուր Բաղդասարյանը ծախսել է 21 մլն 941 հազար: Երկու թեկնածու՝ Գեղամյանն ու Տեր-Պետրոսյանը ծախսել են 14 մլն դրամի չափով (Գեղամյանը մի փոքր ավելի): Տիգրան Կարապետյանն իր ունեցածի մեծ մասը՝ 580 հազ. դրամ ծախսել է արդեն, Վազգեն Մանուկյանը խնայողաբար է օգտվում ունեցած միջոցներից՝ մոտ 1 մլն 399 հազար ոչ եւս է: Արամ Հարությունյանը մսխել է իր ողջ ունեցածը՝ 190 հազար դրամը: Արման Մելիքյանն էլ որ չուներ՝ ինչ էր ծախսելու:

ԿԸՀ-ն մինչեւ երեկ 13 դիմում-բողոք է սացել՝ 9 դրանցից հասարակական կազմակերպություն ներկայացնող Ռուբեն Թորոսյանինն են, ընդ որում՝ դրանց կեսն էլ պարզաբանում սահմանելու դիմում է: Երեկ ԿԸՀ դիմում-բողոք է ներկայացրել նաեւ Լեւոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբի պետ Ալեքսանդր Արզումանյանը՝ մինչեւ հունվարի 21-ն իրենց արձանագրած խախտումների վերաբերյալ:

Փետրվարի 9-ին ԿԸՀ-ն կիրառեցի քվեաթերթիկների նմուշները, որոնք այնուհետեւ տպագրվելու են «Տիգրան Մեծ» տպագրատանը: Նույն օրը մինչեւ ժամը 18-ը թեկնածուները հնարավորություն ունեն հանելու իրենց թեկնածությունը:

Լրագրողները հարցեր ուղղեցին անձնագրային ծառայողները հավաքելու դեպքերի եւ այլ խախտումների վերաբերյալ: Գ. Ազարյանը հանգամանքներ՝ այդպիսի ծառայողներն օգտագործել, դրանցով քվեարկություն իրականացնել ոչ մեկը չի կարող, եթե քաղաքացին ինքը դա չուզի, քանի որ քվեարկության գործընթացը բաց է:

Ինչպես և Սերժ Սարգսյանի նախընտրական ծախսը, օրինակ, Վահան Հովհաննիսյանի ծախսից պակաս, երբ հենց Ս. Սարգսյանի մեծաքանակ տեսանելի վայրերում: Ազարյանը նկատեց, որ հավանաբար պայմանագրերով վճարումներն ավելի ուշ են կատարվելու պատասխանատու քաղաքական նյութերի դիմաց:

Եկեղեցու ներկայացուցիչը, ավելի ուշ, ըստ հարցի՝ կրոնական կազմակերպության ներկայացուցիչը կարո՞ղ է քարոզչություն իրականացնել. հարցնողը նկատի ուներ Առաքելական թեմի առաջնորդին. «Ընտրական օրենսգրքով արգելվում է կրոնական կազմակերպությունների կողմից» ՀՀ նախագահը ուշ վստահ էր թեմի հարցում:

«ԱԶԳ» ՕՐԱԳԻՐ
հրատարակության մասին
«ԱԶԳ ՕՐԱԳԻՐ» ՍՊԸ
Երեւան, Հարությունյան 47
Հեռ. (374 10) 562863
e-mail: azg@azg.am
azg@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Խմբագիր / Հեռ. 521635
ՊԱՐՈՒՅՐ ՅՈՒՐԻՆՅԱՆ
Հասարակական (քաղաքական) / Հեռ. 529221
Տնտեսության / Հեռ. 582960
Մշակույթի սենյակ / Հեռ. 581841
Գեղարվեստական / Հեռ. 582483
Տեղեկատվության բաժնի պետ / Հեռ. 529353
Հանձնաժողովի քարտուղար
«Ազգ» թերթի
Թերթի նիշերի ամբողջական թե մասնակի արտատպումները տպագիր ձեւերի միջոցով կամ ռադիոհեռարձակումներ թույլատրվում են միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ եւ հղում կատարելով «Ազգ» ՀՀ հերթական իրավունքի մասին:
Նյութերը չեն գրախմբագրվում ու չեն վերադարձվում
Գ. Ազարյանի կարծիքները գրախմբագրվել են, որոնց բովանդակության համար խմբագրությունը պատասխանատու չի կրում:
'AZG' Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 0010

Շաբաթվա վերջում կդարձվի «Ժառանգություն»-ՕԵԿ-Լեւոն Տեր-Պետրոսյան բանակցությունների արդյունքը

Հայտարարեց Լեւոն Տեր-Պետրոսյանի մամուլի խոսնակ Արման Մուսինյանը

Լեւոն Տեր-Պետրոսյան-Արթուր Բաղդասարյան-«Ժառանգություն» միավորման մասին փոխադարձ հայտարարություններն ու ակնարկները, որ առդեն իսկ երեք ուժերի միջեւ ընթացող բանակցությունների արդյունքում են հայտնվում հրապարակներում, իրենց լուծումը կստանան շաբաթավերջին: Երեկ այս մասին «Հայացք» ակումբում հայտարարեց նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբի ժամուլի խոսնակ Արման Մուսինյանը: «Ժառանգության» նախօրեի հայտարարությանն անդրադառնալով, որով ժառանգականներն ասել էին, թե իրենց անունից որեւէ մեկը հիմք չունի հայտարարություններ անելու, Արման Մուսինյանը նշեց, որ տարակարծիք հայտարարությունները նորմալ են, քանի որ ընդդիմության դաշտում այժմ նորմալ քաղաքական գործընթացներ են տեղի ունենում: Հիմքերի բացակայության մասին «Ժառանգության» երեկվա հայտարարությունը, նրա խոսքով, նորմալ է եւ մնում է գործընթացի տրամաբանության մեջ. «Կարեւորը դրա արդյունքն է»: Նա նաեւ ասաց, որ չի բացառվում «Նոր ժամանակներ» կուսակցության նախագահ Արամ Կարապետյանի միացումը իրենց շարժմանը. «Լուրջ հիմքեր կան»:

Իրենց թիմի քարոզչությունը Լեւոն Տեր-Պետրոսյանի շտաբի ժամուլի պատասխանատուն լավ գնահատեց, ավելին՝ նշեց, որ իրենք լավ ընդունելություն են գտել Արմավիրի, Արագածոտնի, Տավուշի, Գեղարքունիքի մարզերում, «շատ լավ դիրքեր ունենք նաեւ Երեւանում»: Այլ բան, որ իշխանությունները, Մուսինյանի գնահատմամբ, ամեն կերպ խոչընդոտում են իրենց թեկնածուի քարոզարշավին: Ակումբի հյուրը համոզված է, որ իրենց հաճար իշխանությունների ստեղծած խոչընդոտներն էական չեն եւ 2 շաբաթից իրենց թեկնածուն եւ թիմը կամրագրեն այն, ինչի մասին նշում էին: Ի դեմ, տուգանային հրապարակ տարած խաչատուր Սուքիասյանի մեղեցնա վերադարձել է:

Արման Մուսինյանը տեղեկացրեց, որ իրենք դիմել են կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ Սերժ Սարգսյանի թեկնածությունը չեղյալ հայտարարելու պահանջով, որովհետեւ նրա քարոզարշավը խախտումներով է ընթանում: Արման Մուսինյանի խոսքով, այդ տեղեկությունները իրենք նաեւ դիտորդներին են տրամադրել, իսկ ԿԸՀ-ի բացասական պատասխանի դեմքում դիմելու են դատարան՝ ԿԸՀ-ի անգործության մասին հայցով:

Ավելի վաղ, երբ Մուսինյանը դեռ Լեւոն տեր-Պետրոսյանի ժամուլի խոսնակը չէր, «Արմենիա» հեռուստաընկերության եթերից հայտարարել էր, թե ազատագրված 5 շրջանները միակողմանիորեն պետք է վերադարձվեն Ադրբեջանին, իսկ մնացածի շուրջն առդեն պետք է բանակցել: **«Ազգի»** հարցին, թե այժմ, երբ նա առդեն ժամուլի խոսնակ է, նրա տեսակետում փոփոխություն եղե՞լ են, թե ոչ: Արման Մուսինյանը պատասխանեց, որ ինքն ասել է, թե Ղարաբաղի խնդրի կարգավորման այն ծրագրով խաղաղությունը երաշխավորող անվտանգության գոտի ունենալու դեմքում է խոսվել 5 տարածքների վերադարձի մասին: «Միայն խաղաղության պայմանագիրը կնքելուց հետո կարող են այդ 5 շրջանները Ադրբեջանին վերադարձվել՝ երաշխավորված խաղաղության դեմքում, անվտանգության գոտի ունենալու դեմքում» հավելեց ժամուլի խոսնակը:

Հարցին, թե Լեւոն Տեր-Պետրոսյանը իր օրոք կատարված սպանությունները բացահայտել չկարողանալու դեմքում ինչո՞ւ է այժմ հայտարարում, թե գալու է այս իշխանությունների ժամանակ կատարված սպանությունները բացահայտելու, Մուսինյանը նախ պատասխանեց, որ այս իշխանությունները 10 տարի ունեին այդ սպանությունները բացահայտելու համար, թող անեին: Հետո էլ, թե հոկտեմբերի 27-ի գործի թե՛ նախաքննական, թե՛ դատավարական հաշվածներն ընթացել են օրենքի կոպիտ խախտումներով, եւ Լեւոն Տեր-Պետրոսյանը գալիս է հենց այդ խախտումները վերացնելու: Առաջին նախագահի շտաբի ժամուլի պատասխանատուն այն կարծիքին է, որ այսօրվա իշխանությունը բովանդակազուրկ է, իսկ առաջին նախագահի տարիներին՝ չնայած թերություններին, քաղաքական իշխանություն կար:

Արման Մուսինյանը ասեց, թե Լեւոն Տեր-Պետրոսյանը Ծարենցավանում ոչ թե ասել է, որ 10 տարի հետո Գագիկ Ծառուկյանը, Ռուբեն Հայրապետյանը եւ Սամվել Ալեքսանյանը բոմժ կդառնան, այլ վերջիններս բոմժ կդառնան այս իշխանությունների մնալու դեմքում:

Լեւոն Տեր-Պետրոսյանի թիմի մասին Արման Մուսինյանը հաստատակությամբ խորհուրդ տվեց չանհանգստանալ: Նրա խոսքով, այսօր Լեւոն Տեր-Պետրոսյանի կողքին կանգնած են այն քաղաքական ուժերը, որոնք սատարում են թեկնածուին, եւ «պարտադիր չէ, որ նրա իշխանության դեմքում աշխատող մասնագետները նախագահին ուղեկցեն, ասենք, Գեղարքունիք»:

Ընտրությունների երկրորդ փուլ՝ Սերժ Սարգսյանի եւ Վահան Հովհաննիսյանի մասնակցությամբ, Արման Մուսինյանը բացառեց, իսկ առաջին փուլ էլ Սերժ Սարգսյանի հաղթանակով տարբերակին արձագանքելիս նշեց, որ «սխրված է հուսահատեցնել նրան, նման բան չի լինի»:

ՀԱՅԿԱՆՈՒՇ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«Մեր մեջ ընկած միջնորդներին, որոնք փորձում են կեղեքել ու ճնշել մեզ, ես կվերացնեմ»

Վահան Հովհաննիսյանը պայքարելու է մինչեւ վերջ

ՀՀ նախագահի թեկնածու, ՀՅԴ բյուրոյի անդամ, Աժ փոխնախագահ Վահան Հովհաննիսյանի նախընտրական քարոզչական խումբը երեկ Արագածոտնի մարզի Աղարան, Թալին եւ Ուշարակ քաղաքներում հանդիպեց բնակչության հետ:

Մինչեւ Աղարան հասնելը Վահան Հովհաննիսյանը հանդիպում է ունեցել նաեւ Ծաղկահովիտի բնակիչների հետ: Աղարանցիների հետ հանդիպման ժամանակ ելույթ ունեցավ Աղարի Արշակյանը եւ ասաց, որ ընտրել է Վահան Հովհաննիսյանին, որովհետեւ վերջինս մենակ է հանդես գալիս եւ երկու-երեք հոգի էլ իր հետ չի տանում մյուսների նման՝ սրան-նրան կծելու համար. «Հիշում եք չէ՞, խորհրդարանական ընտրություններին բոլորին կաշառեցին, 5000 դրամն էլ ձեր ոտքից հանեցին: Իմացեք՝ ինչ եք անում. Վահանը անկաշառ է, օլիգարխների հետ փայ չունի: Օգնեք Վահանին, եւ ես էլ գոհ հաղթելու եմ, հաղթելու եմք մյուս ուրիշ: Պատվով թեկնածուն Վահանն է»: Աղարի Արշակյանը հիշեց նաեւ երջանկահիշատակ Մանուկ Գասպարյանին եւ խնդրեց, որ մեկ րոպե լռությամբ հարգեն Մանուկ Գասպարյանի հիշատակը, եւ որ ոչ ոք մյուս թեկնածուներից Աղարան գալով չի հիշել Մանուկ Գասպարյանին, Արշակյանի խոսքերով, անկասկած պարանցում. միայն այն պատճառով, որ Մանուկ Գասպարյանը Տեր-Պետրոսյանին էր սատարում:

Այնուհետեւ ելույթ ունեցավ Վահան Հովհաննիսյանը եւ նշեց, որ կցանկանար յուրաքանչյուր ադարանցու հետ առանձին խոսել, իմանալ բոլորի հոգսերը, օգնել երեխաների հետ, սակայն ժամանակը չէր նրանում: ՀՅԴ անդամը ընտրվելուց հետո պետք է վերականգնի արդարությունը, երեւանի նման մյուս հեռավոր մարզերն էլ պետք է զարգացում ապրեն: Նախագահի թեկնածուն ճնշադատում է նախկին իշխանություններին եւ միեւնույն ժամանակ մերկասնորեն: Նա տեսնում է 12 տարկս տնտեսական աճը, բայց ասի հետ մեկտեղ նորից չինովնիկն է հարստանում, իսկ հեռավոր գյուղերն ու քաղաքները նույն խղճուկ վիճակում են մնում: Ինչեւէ, Վահան Հովհաննիսյանը վստահեցնում է ժողովրդին, որ իր նախագահ դառնալու դեմքում ամեն ինչ իր տեղն է ընկնելու, եւ որ ինքը ոչ մեկից վախենալու բան չունի, կախվածություն չունի ոչ մեկից:

Ադարանից հետո դաշնակցական թեկնածուի հաջորդ հանդիպման վայրը Թալին քաղաքն էր: Այստեղ նույնպես Հովհաննիսյանի հանդիպումները շատ էին: Եկել էին Ուշակից, Ներքին ու Վերին Սասնաբերից, Բազմաբերդից ու Դավթաբերից: Թալինում նույնպես Վահան Հովհաննիսյանը զարգացում չի տեսնում, քանի որ երեւանում խաղաքարտերն ու սառնաքարերն են ավելանում:

Վահան Հովհաննիսյանը հանդիպեց նաեւ Ուշարակի բնակիչների հետ: Այստեղ էլ իրենց հերթին ելույթ ունեցան ՀՅԴ կրթության եւ գիտության նախարար, Ազգային ժողովի ՀՅԴ խմբակցության անդամներ: Վահան Հովհաննիսյանը այստեղ նույնպես հավաստիացրեց, որ բոլորին լավ ապագա է սպասելու իր ընտրվելու դեմքում:

ՆԱՐԻՐ ՄԱՐԻԱՐՅԱՆ

Արագածոտն-Երեւան

ՕՐԱԿԱՐԳ

Այսօր

◆Ժամը 11.00-ին «Ուրբաթ» ակումբում Երեւանի ժամուլի ակումբը կիրառարակի մոնիտորինգի արդյունքները:

◆Ժամը 11.10-ին կկայանա վարչապետներ Սերժ Սարգսյանի եւ Վիկտոր Ջուրկովի համատեղ ժամուլի ասուլիսը:

◆Ժամը 12.00-ին «Փաստարկ» ակումբի հյուրն է Հեղինե Բիսարյանը:

◆Նույն ժամին «Հայելի» ակումբում կքանավիճեն Արթուր Աղաբեկյանը եւ Հովհաննես Իգիթյանը:

◆Ժամը 12.00-ին ՆԱՏՕ-ի տեղեկատվական կենտրոնի հյուրը կլինի ՀՀ նախագահի թեկնածու Արման Մելիքյանը:

◆Նույն ժամին «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում ասուլիս կտա Populars-ի տնօրենը:

◆Ժամը 12.00-ին «Ուրբաթ» ակումբի հյուրն է Վազգեն Մանուկյանի տարի-ոչ Սամվել Շահինյանը:

◆Ժամը 12.00-ին «Տեսակետ» ակումբի հյուրն է Սիամոն Անիբեկյանը:

◆Ժամը 13.00-ին «Տեսակետ» ակումբում է ՀՀԾ վարչության անդամ Արամ Մանուկյանը:

◆Ժամը 14.00-ին «Ուրբաթ» ակումբի հյուրն է Փարաջանովի տունթանգարանի տնօրեն Զավեն Սարգսյանը:

ՔԱՂԱՔԱՐԱՎ

«Մենք եկել ենք ու հաղթելու ենք»

Պնդում է ՀՀ նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանը

ՀՀ նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանը քարոզարշավի 16-րդ օրը սկսեց Կոտայքի մարզի ընտրողների հետ հանդիպումներով: Նա Կոտայքի մարզ այցելեց 3-րդ անգամ: Իսկ երեկ նա հանդիպեց Նոր Գեղիի, Նոր Հաճընի, Աբովյանի, Բյուրեղավանի ու Եղվարդի ընտրողների հետ: Շուրջ 7 տասնյակ մեքենաների շարասյունը կանգ առավ Բյուրեղավանի մշակույթի տան առջեւ, որտեղ ընտրողների հետ հավաք բացեց Նիկոլ Փաշինյանը, առյա հաջորդաբար ելույթ ունեցան ՀՅԿ նախագահ Ստեփան Դեմիրճյանը, «ՀԱԿ» նախագահ Հովհաննես Հովհաննիսյանը եւ «Հանրապետություն» կուսակցության խորհրդի նախագահ Արամ Սարգսյանը:

Լեւոն Տեր-Պետրոսյանը հատկապես նշեց. «Հայաստանում մենք ունենք վերից-վար կոռումպացված, հստակ կանոններով գործող մի ավազակապետական համակարգ, որը ստեղծել են Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանը: Չկա ՀՀ-ում որեւէ հիմնարկ, կառույց, կրթօջախ, որտեղ թափանցած չլինեն այս պատկերը: Դրանց ամբողջ մեթոդը սա է, ոչ միայն իրենք են գող, ոչ միայն իրենք են ավազակ, այլեւ փորձում են գող ու ավազակ դարձնել ցանկացած մարդու: Ես պատասխանատվությամբ հայտարարում եմ՝ համակարգում չկա ազնիվ մարդ: Սա իրական համակարգ է»: Այնուհետեւ թեկնածուն նշեց, որ այս իշխանությունների օրոք կես միլիոն մարդ հեռացել է երկրից. «ժողովուրդն այլեւս այս հողի հետ հույս չի կապում, այստեղ հեռանկար չի տեսնում» ու ընտրատարածքն անվանեց «խայտառակություն, որտեղ հակառակորդները կամ մրցակիցները խաղում են չափազանց տարբեր խաղի կանոններով»: Մենք եկել ենք մի պատճառով, որովհետեւ համոզված ենք, որ եւս 10 տարի եւ Հայաստանից ոչինչ չի մնա ու Սերժ Սարգսյանի գլխավորությամբ մենք Ղարաբաղում կունենանք մի նոր պատերազմ, նոր դաշտեր, նոր զոհեր, նոր գանիսե գերեզմաններ: Ահա սա է նրա թողնելիք ժառանգությունը»: Կոչ արեց ձայն տալ իրեն եւ իրենք էլ տեր կկանգնեն այդ քվեներին:

Հաջորդ հանդիպումը Նոր Գեղիի ընտրողների հետ չկայացավ, գյուղում թաղում էր...

Նոր Հաճընում թեկնածուն իր ելույթում նշեց, որ Սերժ Սարգսյանի ընտրելու դեմքում Կոտայքի մարզ-տեսը կլինի ՊԱԶ-ի վարող Սաշիկ Սարգսյանը... «Այս իշխանությունները գող, ավազակ, դավաճան, հակաժողովրդական են: Այն, ինչ արել են, նրա պատվով պիտի թողնեն ու գնան: Հանդուրժել այլեւս հնարավոր չէ: Եկա 10 տարի գալ իշխանության, նշանակում է կորցնել Հայաստանը, կորցնել Ղարաբաղը: Ցիավասած նրանց ղարաբաղյան հայրենասիրությանը բացարձակապես: Նրանք առաջին հերթին դավաճանում են Ղարաբաղին ու նրա ժողովրդին, թշնամանք սերմանում երկու ժողովուրդների միջեւ... եվ ես ցավ եմ զգում, որ այդ ժողովուրդն այսօր պիտի անպատվություն զգա այդ երկու ոճրագործի պատճառով»:

Նա նշեց նաեւ, որ 15 հազար ղարաբաղցի լքել է Ղարաբաղը Սերժի ու Քոչարյանի պատճառով, ու նրանցից շատերը Հայաստանում զբաղեցնում են պատասխանատու. «Ես ասել եմ ու էլի եմ կրկնում, Գագիկ Ծառուկյանը 10 տարի հետո հարստություն չի ունենալու, այդ հարստությունն անցնելու է կամ Սաշիկին, կամ Սերժ Սարգսյանին ու իր բարեկամներին: Թող օլիգարխները, մեծահարուստները սա լավ հասկանան... Սա ցավ է, ողբերգություն է»: Այնուհետեւ L. S.-Պ.-ն բարձրախոսն օգտագործելով դիմեց Գագիկ Ծառուկյանին ու հույս հայտնեց, որ «դեռ ժամանակ կա եւ կարող ես մեր կողքին կանգնել...»: Ավարտելով ելույթը, նշեց. «Փետրվարի 19-ին ընտրելու՝ Սերժ Սարգսյանին, դուք ընտրում եք Նախիր Հունանյանին, Թոխմախի Մեհրին, ՊԱԶ-ի շտաբ Սաշիկին, Մխչյանի մկանը, սերվիս Անդրյին, կակեմ Հրաչին, նեմեց Ռուբրյին... Սերժի բոլոր ընկերները մականունավոր են»: Ասեմ, որ բոլոր ելույթները բոլոր տեղերում ընդմիջվում էին՝ «Լեւոն, նախագահ», «Հաղթանակ», «Պայքար, պայքար մինչեւ վերջ» վանկարկումով ու ծափերով, թեկնածուի հետ տեղ հասած մարդկանց գլխավորությամբ:

ՄԱՐԻՈՆԱ ՄԱՆՈՒՐՅԱՆ

Գրանցվել է բանկի նոր մասնաճյուղ

Կենտրոնական բանկի նախագահի հունվարի 30-ի թիվ 1/76Ա որոշման համաձայն գրանցվել է «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ «Արաբկիր» մասնաճյուղը:

ԿԲ մամուլի ծառայություն

Դեպի ապագան միտված համապարփակ եւ իրատեսական ծրագիր

Տաբված օրեր են մնում մինչեւ Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրությունները: Երկիրն այսօր կանգնած է ոլորտական խաչուղիների առջեւ: Նախագահի ընտրությունից մեծաթես կախված է լինելու Հայաստանի առնվազն հնգամյա ապագան: Նախագահը կոչված է երկրում ամրապնդելու սահմանադրության գերակայությունը, ապահովելու մեր ժողովրդի միասնությունը, ղեկավարելու ոլեական եւ համազգային անվտանգության ապահովման, հասարակական զարգացման խնդիրների ընթացքը՝ մի բարդ ժամանակահատվածում, երբ աշխարհը կանգնած է նոր մարտահրավերների առջեւ, երբ համաշխարհային անվտանգության, տնտեսական եւ ֆինանսական համակարգերը արմատական փոփոխություններ են կրում:

Ապագա նախագահից պահանջվում է առաջնայինը երկրորդականից տարբերելու, իրատես լինելու հմտություն, երկրի զարգացման հնարավորությունները մոբիլիզացնելու եւ ընդարձակելու կարողություն, վճռականություն, նպատակասլացություն: Անկասկած գործելու համար նա պետք է վստահություն ներշնչի եւ վստահի հասարակության լիակատար աջակցությունը:

Կենսափորձն է սովորեցնում իրատեսություն, զգում արժեքների սանդղակը զանազան կողմնակի կամ հնացած շերտերից: Միանգամից է ակնկալել իրավիճակի ճիշտ գնահատական, ճիշտ կանխատեսում, ճիշտ քայլեր կամ՝ կայունացած արժեքային համակարգ կյանքի որոշակի դրդոց չանցած անձնավորությունից: Միաժամանակ, մեր հասարակությունն ինքը տակավին խաղաքաղաքական հասունության ձեւավորման ճանապարհին է: Ուստի, այնպիսի մարդիկ, որքա՛ն, հակառակ պարագայում, կարող էին ընդունելություն ունենալ լավագույնս ինչ-ինչ նեղ շրջանակներում, այսօր հանդես են գալիս իբրեւ համազգային մակարդակի գործիչներ: Տարօրինակ է, երբ նախագահի թեկնածուների շարքում տեսնում ես այնպիսիներին, որոնք դեռ երկար ճանապարհ ունեն անցնելու խաղաղական գործիչ կոչվելու համար:

Ընտրություն կատարելիս, բացի առօրյա հանրաքեսական խնդիրներից, չափազանց կարեւոր է տեղեկանալ նախագահի թեկնածուների ծրագրային անելիքների մասին: Օրինակ՝ ես կիարցնեի, թե թեկնածուի ծրագրում ինչ դեր է հատկացվում պետությանը՝ գիտության եւ բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված տնտեսության կազմակերպման, արժանապատիվ զբաղվածության ապահովման, ազգային պաշտպանական-արդյունաբերական հիմքերի ամրապնդման, ազգային համաձայնության եւ խաղաղաշունչ հասարակության ձեւավորման ճանապարհին: Անդրադառնալ՝ կոպիտ ինձ համար, թե արդյոք թեկնածուն գիտակցո՞ւմ է պետության դերը սփյուռքի զորացման, ազգապահպան գործունեության մեջ բոլոր հայերին համախմբելու հարցում:

Ոչ բոլոր թեկնածուների ծրագրում կան նման առանցքային հարցերի պատասխաններ: Պետք է ենթադրել, որ նրանք կամ չունեն պատասխաններ, կամ՝ համապատասխան հարցերն իրենց համար առաջնային չեն համարում: Երկու դեպքում էլ նման թեկնածուների ծրագրերն ինձ այլեւս չեն կարող հետաքրքրել: Ես ընտրություն եմ կատարել այնպիսի թեկնածուների միջեւ, որոնք ունեն իմ դավանած առաջնայնությունները կամ՝ նույն արժեքային համակարգը: Նաեւ՝ անդրադարձի եմ առել երկիրը եւ մարդկանց ղեկավարելու նրանց փորձն ու կարողությունը, ինչպես եւ թեկնածուների իրական հաղթական լծակները, որոնց նրանք տիրապետում են եւ կարող են գործադրել: Այս տեսանկյունից ինձ համար նախընտրելի՝ Սերժ Սարգսյանի թեկնածությունն է:

Նրա առաջարկած նախընտրական ծրագիրը համապարփակ է. ծրագրում նախանշված են Հայաստանի կենսագործունեության եւ հասարակական կյանքի բոլոր ոլորտների հեռագա զարգացման հիմնական խնդիրները, առաջադրվում են զարգացման կոնկրետ ուղիներն ու միջոցները:

Շեշտադրված են առաջնայնությունները, որոնցից հիմնականներն են՝

- անկախ պետականության զորացում, երկրի եւ ազգի անվտանգության ապահովում, միջազգային եւ տարածաշրջանային գործընթացներին երկրի ազդեցիկ մասնակցություն, հարեւան պետությունների հետ բնականոն հարաբերությունների հաստատում.

- արցախյան հիմնախնդրի կարգավորում՝ խաղաղված ընդունելի սկզբունքների վրա՝ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչում եւ դրա կենսագործման միջազգային երաշխիք, Արցախի անվտանգության միջազգային ապահովում, Հայաստանի եւ Արցախի միջեւ ընդհանուր սահմանների առկայություն.

- տնտեսական բարեփոխումների խորացում, մրցակցային, արդյունավետ տնտեսության՝ բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված գիտաստար արդյունաբերության եւ գյուղատնտեսության զարգացում, նեղությունները եւ ակտիվ բիզնեսը խրախուսելու համապատասխան պայմանների եւ միջավայրի ստեղծում.

- մշակութային մակարդակի բարձրացում եւ զարգացում, որը կամրապնդի մեր ժողովրդի տեղը համաշխարհային հաղորդակցությունների փոխհարաբերություններում.

- գիտության, կրթության եւ առողջապահության բնագավառների արդիականացում, որակի բարձրացում.

- սոցիալական իրավիճակի բարելավում. արխատության կտրուկ կրճատում, զբաղվածության աճ, աշխատավարձերի եւ կենսաթոշակների զգալի ավելացում, նոր մեծաբավալ բնակարանային ֆոնդի շահագործում, աղետի գոտու վերականգնման աշխատանքների ավարտ եւ գյուղական բնակավայրերում զարգացման ու սոցիալական ծրագրերի իրականացում.

- սփյուռք-հայրենիք կապի ամրապնդում, սփյուռքի տնտեսական, խորհրդատվական, մասնագիտական նեղգրավվածություն հայրենիքից ներս եւ հայրենիքից դուրս ազգային խոշոր ծրագրերի մշակմանն ու իրականացմանը: Սփյուռքի զորացում: Համայն հայության համախմբում ազգանվեր գործունեության կուրջը.

-հանրապետության տարածքների համաչափ զարգացում, ժողովրդագրական իրավիճակի կայունացում:

Ս. Սարգսյանի ծրագիրն իրատեսական է.

- հիմնված է երկրի իրական հնարավորությունների՝ աշխատանքային, հանրահռչակային, վառելիքենергետիկ պաշարների, հաղորդակցության, ֆինանսական եւ նեղությունային միջոցների առավելագույնս օգտագործման վրա.

- ծրագիրը շարունակական է՝ հաշվի են առնված վերջին 10 տարիների ձեռքբերումներն ու բացթողումները, ընթացքի մեջ գտնվող բազմաբնույթ ու մեծաթավալ ներդրումային ծրագրերի ավարտման անհրաժեշտությունը: Շարունակականությունը նշանակում է կայունություն, առաջընթաց՝ հաղթելմա, բարելավման ճանապարհով. մի մոտեցում, որը վայելում է լայն հասարակական աջակցություն.

- ծրագիրը ներառում է ՀՀ կառավարության՝ տնտեսության զարգացման 5-ամյա ծրագրի, ազգային անվտանգության ռազմավարության եւ արտաքին հաղորդակցման ծրագրերի հիմնադրույթները: Նշված ծրագրերն արդեն բավական ժամանակ աշխատում են եւ բերում են առաջին դրական արդյունքներ: Այսինքն, թեկնածուի նախընտրական ծրագրի հենքն արդեն գործնականում ստուգված է, ամուր է եւ հուսալի.

- ոլորտային զարգացման եւ արտադրողականության աճի բարձր տեմպերը հաշվարկված են մասնագիտական լուրջ հիմնավորմամբ: Առաջիկա հինգ տարիներին ծրագրում նախատեսված է ՀՆԱ-ի ավելացումը 2,1 անգամ, միջին ամսական աշխատավարձինը՝ 1,96 անգամ, միջին ամսական տարեկան կենսաթոշակինը՝ 3,4 անգամ, ինչպես նաեւ արտահանման ծավալի 1,9 անգամ աճ, ներմուծման ծավալի կտրուկ նվազեցումը հաշվարկված, հաշվեկշռված եւ մասնագիտորեն հիմնավորված են: Նման տեմպերն իրոք իրատեսական են եւ շահեկանորեն տարբերվում են մյուս թեկնածուների կողմից հնչեցված թեկնածուների կողմից հնչեցված դեկլարատիվ բնույթի անհիմն, ուռճացված ցուցանիշներից:

Ծրագրի իրականացումը երաշխավորված է մի շարք առարկայական իրողություններով:

Հանդարտությունը եւ իրատեսական լինելը ծրագրի իրագործելիության անհրաժեշտ երաշխիքներից են: Առաջինի առիթով բավարար է ասել, որ առանց համապարփակության՝ մրցունակ տնտեսության, գիտության, մրցունակ աշխատավարձերի, մրցունակ առողջապահական, կրթական, մշակութային եւ մարդկային մյուս բոլոր կարիքները տրամաբանող համակարգերի երկրի զարգացում չի ապահովվի, ազգաբնակչության արտահոսքը չի կանխվի: Երկրորդի դեպքում պատասխանը նույնքան ակնհայտ է՝ եթե ծրագիրն իրատեսական չէ, եւ չի աշխատելու նրա նույնիսկ մեկ հատվածը, ասենք, չենք ձեւավորելու որակյալ կրթական համակարգ, ապա չի աշխատի ծրագիրն ամբողջությամբ. առանց որակյալ կրթության վաղը չենք ունենա բավարար գումարներ սոցիալական ծրագրերի իրականացման համար եւ այլն:

Ծրագրի իրականացման մյուս կարեւոր երաշխիքներ են.

ա. Քաղաքական եւ հասարակական անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը.

Ս. Սարգսյանին սատարում են հանրապետության ազդեցիկ հաղթական ուժեր: Այժմ եւ առաջիկա հինգ տարիներին սահմանադրորեն գործող Ազգային ժողովի պատգամավորների գերակշիռ մեծամասնությունը Ս. Սարգսյանին սատարող կուսակցությունների ներկայացուցիչներ են:

Ս. Սարգսյանը վայելում է հասարակական լայն շերտերի վստահությունը եւ աջակցությունը: Դրա հավատի վկան անցած խորհրդարանական ընտրություններն են, որի հաղթական ուժերը տապան 661,5 հազար քվե կամ ընտրություններին մասնակցածների ձայների 47 տոկոսը, եւ այդ ինդեքսն լավագույն արդյունքը կլինեն հենց փետրվարի 19-ի ընտրությունները:

բ. Սերժ Սարգսյանն ունի մի շարք անժխտելի առավելություններ: Ունի մեծ ռեսուրսներ եւ անձնական ներդրում Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի հանրապետությունների կայացման, պետականության ամրապնդման գործում:

Անցել է կյանքի հարուստ դրդոց: Լուրջ փորձառություն ունի, մասնավորապես, պետական կառավարման եւ բանակի, ազգային անվտանգության, ներքին գործերի ոլորտներում:

Արտակարգ իրավիճակներում, սկզբունքային հարցերի ենթակայան ժամանակ կարողանում է արագ խնդիրներ լուծել եւ համապատասխան որոշումներ կայացնել:

Ուժեղ կամքով, կուռ տրամաբանությամբ անհատականություն է, ունի խոսքի եւ գործի միասնություն, սկսած գործն ավարտին հասցնելու հատատակամություն: Կարողանում է մարդկանց կազմակերպել եւ, որ անենակարեւորն է, առաջնորդել: Ունի արժանապատիվ կեցվածք եւ Հայաստանը ներկայացնելու հմտություն: Միջազգային ասպարեզում ունի վստահելի գործընկերոջ համբավ:

Մտահոգված է երկրի հանրային կյանքի առողջացման հարցերով, սկզբունքային քաղաքական գործադրում է մեր հասարակությանը անհարիր երեւույթների՝ հովանավորչության, կաբառակերության, անպատժելիության, իշխանության չարաշահման եւ ուրիշ առաջներ ծնող պատճառները արմատախիլ անելու համար: Վարչապետության կարճ ժամանակահատվածում այդ ուղղությամբ նրա ձեռնարկած եւ իրականացրած միջոցառումները հավատ են ներշնչում: Պահանջկոտ է, աշխատասեր, չի խուսափում պատասխանատվություն կրելուց, ընդունում է սեփական սխալներն ու բացթողումները: Համեստ է, չի տառապում՝ պատճառելիությամբ, բարի է եւ մարդկանց հետ հաղորդակցվող:

Բավականին ժամանակ է, ինչ մեկնարկել է ընտրապայքարը, եւ ակնհայտ է, որ թեկնածու Սարգսյանը հանդես է բերում ազնիվ գործելակերտ, չի վարկաբեկում նախագահի մյուս թեկնածուներին, հանդես է բերում հանդուրժողականություն եւ տակտ, ինչը լավագույն վկայությունն է նրա անձնական բարձր հատկանիշների:

Նա հաջ գիտակցում է, որ հանրության վստահությունը արդարացնելու գլխավոր պայմաններից մեկը ազատ եւ արդար ընտրությունների անցկացումն է եւ որպես հաղթական գործիչ պատրաստ է պատասխանատու լինել այդ կարեւոր գործում, հանգի դրանից է կախված մեր երկրի ու ժողովրդի վարկանիշը հաղթակիրթ աշխարհի առջեւ եւ միջազգային կառույցներում, ինչպես նաեւ լեգիտիմ նախագահի ընտրությունը մեր երկրի կայունության եւ հետագա զարգացման գրավականն է:

Հինգ տարի հետո ես ուզում եմ տեսնել Հայաստանը իբրեւ զարգացած ենթակառուցվածքներով, բարձր տեխնոլոգիաներով, արդյունավետ, գիտաստար, մրցակցային տնտեսություն ունեցող երկիր: Հինգ տարի հետո ես ուզում եմ տեսնել Հայաստանը՝ առավել հզոր բանակով, խաղաղ երկնքով, խանդավառ եւ բարեկեցիկ հաղթաքաղաքացիներով: Համայն հայոց խանդավառությունն ու հայրենակցության գործունեությունն է ստեղծելու այս ամենը, ապահովելու Հայաստանն ու Արցախը:

Հինգ տարի հետո ես ուզում եմ տեսնել Հայաստանը իբրեւ բարձր բարոյականության եւ զարգացած մշակույթի, ազգային համաձայնության եւ հաղթաքաղաքական համերաշխության երկիր: Եվ ապագա նախագահն է, որ պետք է դեկավարի նման բարոյահոգեբանական մթնոլորտի արմատավորման գործը:

Համոզված եմ, որ Սերժ Սարգսյանի Հայաստանի Հանրապետությունն նախագահ ընտրելու դեպքում նրա եւ ժողովրդի ջանքերով հենց այդպիսին կլինի Հայաստանը:

ՎԱՀԱԳՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԱԶԳ
6 ՓԵՏՐՈՒԱՐ 2008 ԷՋ Ա

ՀԱՎԵԼՎԱԾ ԿՐՆՈ

Լոսանջելեսցին ըստ Էրիկ Նազարյանի

ԱՐԾՎԻ ԹԱՆՉԻԿՅԱՆ

Անցյալ տարի ափխարհի հեղինակավոր կինոփառատոներից մեկում՝ Սան Սեբաստիանի (Իսպանիա) 55-րդ միջազգային փառատոնի մրցութային ծրագրում կայացավ ամերիկահայ բեմադրիչ Էրիկ Նազարյանի «Կապույտ ժամը» անկախ կինոնկարի առաջնախաղը: Ըստ «Վերայիթիի» ինքնագրաֆ Յոնաթան Յոլանդի՝ «Կապույտ ժամը» սկսնակ Էրիկ Նազարյանի ուժեղ այցեստնվն է, որի «կյանքը» կարող է տարածում գտնել փառատոնային շրջանակներում:

Լոս Անջելեսի AFFMA միջազգային կինոփառատոնում Նազարյանի ֆիլմը շահել է լավագույն բեմադրության համար նախատեսված մրցանակը, որից հետո մասնակցել է Թուրինի (Իտալիա) միջազգային կինոփառատոնին:

Էրիկ Նազարյանը գրել է «Կապույտ ժամը»՝ ներշնչված իր մանկության Լոս Անջելես Ռիվեր արվարձանից ու նոստալգ ունենալով ինքել հաղորդի ամենօրյա կյանքն ու տարբեր ազգությունների միջև եղած թույլ կապերը: Հոսկայական տարածության վրա սփռված ու միմյանց անհաղորդակից Լոս Անջելեսը հիշեցնում է լեզուների բաբելոնյան խառնարան, որտեղ խառնվոնց մարդիկ ապրել են Վանեսա Միֆֆրին ու Միհեր Ջեյթունյանը: Ֆիլմում նկարահանվել է ամերիկյան թատրոնի ու կինոյի նշանավոր ու տաղանդաշատ դերասանուհի Քարին Քոնդազյանը՝ Թելլի դերում:

Մեր խնդրանքով Էրիկ Նազարյանը հատուկ հայաստանցի ընթերցողի համար գրի առավ իր խորհրդածությունները կինոնկարի մասին. «Գրականության մեջ ունենք բառեր, կինոյում՝ պատկերներ ու հնչյուններ՝ պատմելու համար պատմություններ: Որպես ամերիկահայ կինոբեմադրիչ ինձ հետաքրքրում են թեմաներ, որոնք կիսամաղաստանեն իմ համաշխարհայնացվող սերնդին ու կինոյի միջոցով հայկական պատմություն պատմելու համար նոր ուղիների հայտնագործմանը: «Կապույտ ժամը» ստեղծելով հույս ունեի ուսումնասիրել նույն հարեւանության մեջ ապրող, սակայն միմյանց չանչվող օտարականների մարդկային նմանությունները: Մեծ քաղաքներում միմյանց չհաղորդակցվելու թեման հետաքրքրում է ինձ որպես կինոբեմադրիչի: Որպես մետրոպոլիսի բնակիչներ՝ մենք ապրում ենք կողք-կողքի ու փողոցում անընդհատ անցնում ենք միմյանց կողքով՝ առանց շփվելու: Կինոյի ներկայությունը մեծ պոտենցիալ ունի՝ պատմելու պատմություններ, որոնք իսկապես անձնական են ու մեծապես համապատասխան են տվյալ ժամանակներին: Իմ սիրած կինոբեմադրիչները, Ներոլայ Սթենլի Քուբրիկն ու Սերգեյ Փարաջանովը, կինոյի լեզուն բարձրացրին նոր մակարդակների՝ օգտագործելով այն որպես ինքնարտահայտման միջոց եւ ափխարհը հայտնագործելու ուղի: Նրանց, ինչպես նաեւ Բերտոլուչիի, Տարկովսկու ու Կուրոսավայի ֆիլմերը ներշնչել են ինձ հայտնագործելու իմ սեփական լեզուն՝ որպես իրականության մասին պատմող կինոբեմադրիչ»:

Կինոբեմադրիչ Էրիկ Նազարյանը

չորս ժամ տեւողությամբ անգլերենի կողքին հնչում է իսպաներեն, կորեերեն, չինարեն, պարսկերեն, հունարեն, հայերեն, հնդկերեն, եբրայերեն, ռուսերեն, սակայն չկա փոխըմբռնում, մարդիկ չեն հաղորդակցվում որպես բազմազգ հասարակության անդամներ:

Ֆիլմը բաղկացած է չորս պատմությունից, յուրաքանչյուրը տարբեր մշակույթի, տարիքի ու կենսակերպի տեր լոսանջելեսցու մասին է: Կերպարներն իրար կողքի ապրում են գետի մոտ՝ անիրազեկ միմյանց նմանություններից եւ անորսալի փոխազդեցություններից: Ինչպես միեւնույն մայրուղով սլացող ավտոմեքենաներ՝ այս հերոսներին «միացրել ենք» տարբեր ռադիոկայաններ, որոնք գաղափար իսկ չունեն իրենց շուրջը եղած մյուս հաճախականությունների մասին:

«Կապույտ ժամը» Էրիկ Նազարյանի առաջին լիամետրաժ շարժանկարն է: Չորս անշտաբ պատմված պատմություն, որոնց առանցքը կազմում է կորստի մոտիվը: Երկրորդ սյուժեի հերոսը հայ է՝ խցիկներ վերանորոգող վարպետ, արջանման, սակայն բարեհոգի Ավոն (դերակատար՝ Յորիկ վան Վագենինգեն), որը փորձում է հաշտվել մանկահասակ դստեր մահվան գաղափարի հետ: Առկա են նաեւ հայ փաստ աղջկա ու տղայի կերպարներ, որոնց մարմնավորել են Վանեսա Միֆֆրին ու Միհեր Ջեյթունյանը: Ֆիլմում նկարահանվել է ամերիկյան թատրոնի ու կինոյի նշանավոր ու տաղանդաշատ դերասանուհի Քարին Քոնդազյանը՝ Թելլի դերում:

Մեր խնդրանքով Էրիկ Նազարյանը հատուկ հայաստանցի ընթերցողի համար գրի առավ իր խորհրդածությունները կինոնկարի մասին. «Գրականության մեջ ունենք բառեր, կինոյում՝ պատկերներ ու հնչյուններ՝ պատմելու համար պատմություններ: Որպես ամերիկահայ կինոբեմադրիչ ինձ հետաքրքրում են թեմաներ, որոնք կիսամաղաստանեն իմ համաշխարհայնացվող սերնդին ու կինոյի միջոցով հայկական պատմություն պատմելու համար նոր ուղիների հայտնագործմանը: «Կապույտ ժամը» ստեղծելով հույս ունեի ուսումնասիրել նույն հարեւանության մեջ ապրող, սակայն միմյանց չանչվող օտարականների մարդկային նմանությունները: Մեծ քաղաքներում միմյանց չհաղորդակցվելու թեման հետաքրքրում է ինձ որպես կինոբեմադրիչի: Որպես մետրոպոլիսի բնակիչներ՝ մենք ապրում ենք կողք-կողքի ու փողոցում անընդհատ անցնում ենք միմյանց կողքով՝ առանց շփվելու: Կինոյի ներկայությունը մեծ պոտենցիալ ունի՝ պատմելու պատմություններ, որոնք իսկապես անձնական են ու մեծապես համապատասխան են տվյալ ժամանակներին: Իմ սիրած կինոբեմադրիչները, Ներոլայ Սթենլի Քուբրիկն ու Սերգեյ Փարաջանովը, կինոյի լեզուն բարձրացրին նոր մակարդակների՝ օգտագործելով այն որպես ինքնարտահայտման միջոց եւ ափխարհը հայտնագործելու ուղի: Նրանց, ինչպես նաեւ Բերտոլուչիի, Տարկովսկու ու Կուրոսավայի ֆիլմերը ներշնչել են ինձ հայտնագործելու իմ սեփական լեզուն՝ որպես իրականության մասին պատմող կինոբեմադրիչ»:

Սցենարիստ, կինոբեմադրիչ, ֆոտոլուսանկարող Էրիկ Նազարյանը ծնվել է 1976թ. Հազդանում, չորսուկես տարեկան է եղել, երբ ընտանիքը մշտական բնակություն է հաստատել Միացյալ Նահանգներում: Կինոբեմադրիչ դառնալուն նպաստել է հայրը՝ բազմաժյա լուսանկարիչ Հայկ Նազարյանը, որը որոշ ժամանակ դասավանդել է Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում՝ Հենրիկ Մայլանի մոտ: Նա որդուն տվել է կինոյի առաջին դասերը՝ ծանոթացնելով հայ եւ ամերիկյան կինոյի լավագույն նմուշների հետ: Էրիքը նախապես զբաղվել է ֆոտոլուսանկարությամբ՝ մեկնաբանելով Լոս Անջելեսի, Հայաստանի եւ Արցախի մշակութային կյանքը, կինոն, բնակչության առագաղթն ու սոցրոցը, աշխատակցել է ամերիկահայ եւ ամերիկյան մամուլին («MovieMaker Magazine», «Written By», «AIM», «The Armenian Reporter»): Կինոարտադրություն է ուսանել Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի կինոարվեստի ու հեռատեսիլի դպրոցում, որտեղ հետագայում կինոբեմադրություն է ուսուցանել Բիլ Քասբիի կազմակերպած ամառային դասընթացների ժամանակ:

Մինչեւ «Կապույտ ժամը» Էրիկը նկարահանել էր մի քանի կարճամետրաժ կինոնկար («Էրոսաս», «Խաղաղ կիրք», «Խուլիգան» եւ «Ոնկիլոն մի բոլշեվիկի համար»): Ներկայումս նա աշխատում է տարբեր կինոծրագրերի վրա, այդ թվում՝ դարաբաղյան պատերազմի մասին մի դրամայի վրա:

Լիահույս ենք, որ «Կապույտ ժամի» ցուցադրությունը չի ուշանա Հայաստանում:

Կադր «Կապույտ ժամը» ֆիլմից

Անա Մելիքյանի «Ջրահարսը» ֆիլմը՝ Բեռլինի փառատոնի «Համայնապատկերում»

Ռուսաստանցի բեմադրիչ Անա Մելիքյանի «Ջրահարսը» մելոդրաման (գլխավոր դերում՝ Մարիա Շալաեւա) ընդգրկված է Բեռլինի կինոփառատոնի (7-17.02.2008) «Համայնապատկեր» հեղինակավոր ծրագրում: Մելիքյանին արդեն երկրորդ անգամ են հրավիրում մասնակցելու փառատոնի «Համայնապատկեր» ծրագրին: 2004-ին «Բեռլինալեում» տեղի էր ունեցել նրա «Մարս» լիամետրաժ կինոնկարի ցուցադրումը (գլխավոր դերերում՝ Գոռա Կուցենկո եւ Արթուր Ամոյանինով):

Մելիքյանի խոսքերով, «Բեռլինալեին» մասնակցելն իրեն, որպես բեմադրիչի, ոչինչ չի տվել: Այդուհանդերձ նա խոստովանում է, որ կինոնկարի վարձույթին պատմության համար Բեռլինի փառատոնը, անկասկած, կարեւոր է: «2004-ի փառատոնից հետո «Մարսը» գնեցին թե՛ եվրոպական հեռուստատեսության եւ թե՛ Հոլոդի վարձույթի համար», պատմել է նա ՌԻԱ գործակալության թղթակցին տված հարցազրույցում:

«Ջրահարսը» ֆիլմը «Բեռլինալեի» հիմնական մրցույթում չհայտնվեց, քանի որ արդեն ընդգրկված էր հունվարի 17-ին ԱՄՆ-ում բացված անկախ կինոյի «Սանդենս» փառատոնում: Անա Մելիքյանը դրա համար չի ափսոսում: «Ես անմիջապես համաձայնեցի մասնակցել ամերիկյան փառատոնի մրցույթին, քանի որ դա կինոնկարին հնարավորություն է տալիս հայտնվելու ամերիկյան վարձույթում», ասում է նա:

Բեմադրիչի տեղեկությունների համաձայն, «Ջրահարսը» ֆիլմը ամերիկյան փառատոնի մրցույթում ընդգրկված արեւելաեվրոպական միակ կինոնկարն է:

Բեմադրիչը նշում է, որ թեեւ «Սանդենսում» փառատոնին զուգահեռ կինոտուկա չի գործում, բայց հենց այնտեղ

Կադր «Ջրահարսը» ֆիլմից

են հավաքվում «արտահուսային կինոյի» ամենահայտնի պրոդյուսերները եւ վարձույթի ափխաղողները:

«Ջրահարսը» ֆիլմի հիմքում Ալիսա անունով աղջկա պատմությունն է: Նա ունի կանաչ մազեր, կարողանում է կատարել մարդկանց ցանկությունները: Հարավային փոքր քաղաքից Մոսկվա տեղափոխվելով՝ նա հանդիպում է մի գեղեցիկ երիտասարդի (դերակատարը Եվգենի Ցիգանովն է), որը Լուսնի հողերի առեւտուր է անում: Ինքնամոռաց սիրահարվելով՝ Ալիսան չի էլ մտածում, որ խոշոր քաղաքում գավառացի աղջկա պատմությունը միտս չէ, որ Մոխրոտիկի պատմության ընթացքն է ունենում:

Կինոնկարի ստեղծման դժվարությունների կապակցությամբ (ֆիլմը Ռուսաստանի վարձույթում է 2007-ի նոյեմբերի 22-ից) Մելիքյանը պատմում է. «Ֆինանսավորման անբավարարության եւ նախահաշվի գերազանցման պատճառով աշխատանքները գրեթե կես տարով դադարեցվեցին նկարահանումներից բառացիորեն երկու շաբաթ առաջ: Իսկ երբ նկարահանումները վերսկսվեցին, ես արդեն հղի էի եւ, չնայած ինձ բավական լավ էի զգում, ուզում էին ավելի շատ պառկել եւ մտածել փոքրիկի մասին: Տվյալ պարագայում ինձ փրկեց այն, որ նախապատրաստական ժամանակահատվածում կինոնկարը հիմնավորապես մշակվել էր եւ դրվագների բաժանվել»:

31-ամյա Անա Մելիքյանը հաշիվ է արժանացել իր «Ցոյահանք», «Կոնտրաբաս», «Andante» եւ «Թռանք» կարճամետրաժ ֆիլմերով, որոնք մասնակցել են ռուսական եւ միջազգային մի շարք մրցույթների:

Պատրաստեց՝
ՊԵՏՐՈՍ ԲԱՇԻՆՅԱՆԸ

Ամերիկյան մասնակ

Նյու Յորքի արդի արվեստի թանգարանի դահլիճներում հունվարի 10-31-ը ցուցադրվեցին Գորան Պասկալեւիչի 13 գեղարվեստական եւ 2 կարճամետրաժ ֆիլմերը: «Նյու Յորք թայմս» թերթը նրա կինոարվեստին անդրադարձել է Ջոն Անդերսոնի հոդվածով, որը թարգմանաբար ներկայացնում ենք ստորեւ:

Նա հարավսլավացի է ու սերբ: Աշխատել է համոզմունքներով միմյանց հակադիր երկու բռնատեսերի՝ Տիտոյի եւ Միլոշեւիչի ժամանակաշրջաններում: Նկարահանել է ֆիլմեր ծերերի («Աշխարհիկ այս օրերն անցնում-գնում են»), սիրո («Լողափի դահակը ձմռանը») եւ տրամաբանությունից զուրկ բռնությունների ու քայքայիչ ցնցումների թիրախ դարձած Սերբիայի մասին («Բալկանյան կաբարե»): Դրա համար էլ, երեւի, տրամաբանական պետք է համարել, որ նա հիմա որպես աշխատանքի վայր ընտրել է Իռլանդիան:

«Նրանք 700 տարի են տառապել անգլիացիների, մենք 500 տարի՝ թուրքերի լծի տակ: Նրանք, մեզ նման, սիրում են խմել: Երկու երկրներն էլ փոքր են, բայց ծնել են լավ դերասանների: Նրանք 4 Նոբելյան մրցանակակիր ունեն, մենք՝ մեկ», ասում է 60-ամյա սերբ կինոռեժիսոր Գորան Պասկալեւիչը՝ ակնարկելով 1961-ին այդ մրցանակին արժանացած հարավսլավացի վիպասան Իվո Անդրիչի մասին:

Վտառնդի դարձած Պասկալեւիչը կարիք չունի շեշտելու Սերբիայի եւ Իռլանդիայի պատմության ճակատագրական նմանություններ: Նրանք երկուսն էլ դիմագրավեցին 20-րդ դարի կորճանարար պատերազմների եւ անցյալի ատելությունների դաժան փորձառությունները:

Իռլանդիայում 2001-ին նա նկարահանել էր իր «Ինչպես Հարրին ծառ դարձավ» այլաբանական ֆիլմը՝ անհանդուրժողականության մասին: Այժմ նա այդ երկրում է՝ վերանկարահանելու համար 1980-ի սեւ կապակերպությունների ժամին պատկանող «Հատուկ վերաբերմունք» ֆիլմը, որը պատմում է սպափարանի հիվանդների եւ նրանց բռնակալ թերապեւտի մասին: Հիվանդներից մեկի դերը կատարում է իռլանդացի դերասան Կոլմ Մինին, որը նկարահանվել էր նաեւ նրա նախորդ «Ինչպես Հարրին ծառ դարձավ» ֆիլմում: «Հարրին» լավ ընդունվեց Վենետիկի կինոփառատոնում. «Հետագայում մենք այն պիտի ցուցադրեինք նաեւ Տորոնտոյի կինոփառատոնում. Կոլմի հետ Փարիզում էինք եւ պատրաստվում էինք թռչել Տորոնտո, երբ լսեցինք Նյու Յորքում սեպտեմբերի 11-ի իրադարձության մասին: Մնացինք Փարիզում, ֆիլմը Տորոնտոյում չցուցադրվեց եւ մինչեւ օրս ԴՎԴ-ների վրա արդեն «թառամել» է», պատմում է Պասկալեւիչը:

Կադր «Ինչպես Հարրին ծառ դարձավ» ֆիլմից

«Մեր երկրում նրա գործերի մեծ մասը անհանոթ է հանդիսատեսին: Կարծում եմ, նրա հոգեբանական ներթափանցումներին, անսահման մարդկայնությանը եւ յուրահատուկ հումորին մենք հո պետք է մասնակից դառնանք», բացատրում է թանգարանի ֆիլմերի բաժնի ավագ պատասխանատու Լորենս Կարդիշը:

Պասկալեւիչը հարավսլավացի առաջին կինոգործիչներից է, որը 1968թ. ավարտել է Պրահայի (Չեխիա) «ՖԱՄՊՍ» կինոմատոգրաֆիական կրթօջախը: Նրա առաջին ֆիլմերը արտացոլում էին նույն հասարակությունում սովորած Միլոշ Ֆորմանի ոճական առանձնահատկությունները: Բայց 1992թ Բոսնիայում պատերազմի բռնկման հետեւանքով նա ոչ միայն փոխեց իր «կեցության վայրը» ու տեղափոխվեց Փարիզ, այլեւ որդեգրեց նոր աշխարհայացք: «Վաղ երեւանի ֆիլմերում ավելի շատ հումոր կար: Հիմա տարիքի բերմամբ, ֆիլմերս ավելի հեգնական կամ ծաղրական են դարձել, բայց ոչ ցինիկ: Ես քաղաքական կինոգործիչ չեմ, բայց քաղաքականությունից ամբողջովին խուսափել չես կարող», ասաց նա՝ վերջերս կայացած հեռախոսային զրույցի ժամանակ:

Եվ նա իրոք չկարողացավ խուսափել քաղաքականությունից: 1992թ. նա ֆանիցս Փարիզից Բելգրադ ժամանեց իրադարձություններին հետեւելու համար, բայց երբ հարցազրույցների եւ փառատոնների ժամանակ բացահայտ ենթադրեց Միլոշեւիչին ու նրա կառավարությանը, վերջիններիս մոտիկ կանգնած լրատվամիջոցները իրենց հրադարակումներով հասկացրեցին, որ նա անցանկալի անձնավորություն է, որին պետք է գնդակահարել:

Եվ նա վերջնականապես հեռացավ: Բայց հետագայում մի անգամ էլ վերադարձավ նկարահանելու իր լավագույն ֆիլմերից մեկը՝ «Բալկանյան կաբարե», որը ծանոթ է նաեւ «Վառոդի տակառը»

Պասկալեւիչ՝ խիզախ ռեժիսորը, որը չի վախենում անգախորժ ճշմարտություններից

թյունները: Նրանք երկուսն էլ դիմագրավեցին 20-րդ դարի կորճանարար պատերազմների եւ անցյալի ատելությունների դաժան փորձառությունները:

Իռլանդիայում 2001-ին նա նկարահանել էր իր «Ինչպես Հարրին ծառ դարձավ» այլաբանական ֆիլմը՝ անհանդուրժողականության մասին: Այժմ նա այդ երկրում է՝ վերանկարահանելու համար 1980-ի սեւ կապակերպությունների ժամին պատկանող «Հատուկ վերաբերմունք» ֆիլմը, որը պատմում է սպափարանի հիվանդների եւ նրանց բռնակալ թերապեւտի մասին: Հիվանդներից մեկի դերը կատարում է իռլանդացի դերասան Կոլմ Մինին, որը նկարահանվել էր նաեւ նրա նախորդ «Ինչպես Հարրին ծառ դարձավ» ֆիլմում: «Հարրին» լավ ընդունվեց Վենետիկի կինոփառատոնում. «Հետագայում մենք այն պիտի ցուցադրեինք նաեւ Տորոնտոյի կինոփառատոնում. Կոլմի հետ Փարիզում էինք եւ պատրաստվում էինք թռչել Տորոնտո, երբ լսեցինք Նյու Յորքում սեպտեմբերի 11-ի իրադարձության մասին: Մնացինք Փարիզում, ֆիլմը Տորոնտոյում չցուցադրվեց եւ մինչեւ օրս ԴՎԴ-ների վրա արդեն «թառամել» է», պատմում է Պասկալեւիչը:

«Մեր երկրում նրա գործերի մեծ մասը անհանոթ է հանդիսատեսին: Կարծում եմ, նրա հոգեբանական ներթափանցումներին, անսահման մարդկայնությանը եւ յուրահատուկ հումորին մենք հո պետք է մասնակից դառնանք», բացատրում է թանգարանի ֆիլմերի բաժնի ավագ պատասխանատու Լորենս Կարդիշը:

Պասկալեւիչը հարավսլավացի առաջին կինոգործիչներից է, որը 1968թ. ավարտել է Պրահայի (Չեխիա) «ՖԱՄՊՍ» կինոմատոգրաֆիական կրթօջախը: Նրա առաջին ֆիլմերը արտացոլում էին նույն հասարակությունում սովորած Միլոշ Ֆորմանի ոճական առանձնահատկությունները: Բայց 1992թ Բոսնիայում պատերազմի բռնկման հետեւանքով նա ոչ միայն փոխեց իր «կեցության վայրը» ու տեղափոխվեց Փարիզ, այլեւ որդեգրեց նոր աշխարհայացք: «Վաղ երեւանի ֆիլմերում ավելի շատ հումոր կար: Հիմա տարիքի բերմամբ, ֆիլմերս ավելի հեգնական կամ ծաղրական են դարձել, բայց ոչ ցինիկ: Ես քաղաքական կինոգործիչ չեմ, բայց քաղաքականությունից ամբողջովին խուսափել չես կարող», ասաց նա՝ վերջերս կայացած հեռախոսային զրույցի ժամանակ:

Եվ նա իրոք չկարողացավ խուսափել քաղաքականությունից: 1992թ. նա ֆանիցս Փարիզից Բելգրադ ժամանեց իրադարձություններին հետեւելու համար, բայց երբ հարցազրույցների եւ փառատոնների ժամանակ բացահայտ ենթադրեց Միլոշեւիչին ու նրա կառավարությանը, վերջիններիս մոտիկ կանգնած լրատվամիջոցները իրենց հրադարակումներով հասկացրեցին, որ նա անցանկալի անձնավորություն է, որին պետք է գնդակահարել:

Եվ նա վերջնականապես հեռացավ: Բայց հետագայում մի անգամ էլ վերադարձավ նկարահանելու իր լավագույն ֆիլմերից մեկը՝ «Բալկանյան կաբարե», որը ծանոթ է նաեւ «Վառոդի տակառը» անունով: Դա էլեգիա է երբեմնի Հարավսլավիայում տարբեր էթնիկ խմբավորումների միջեւ գոյություն ունեցող խաղաղության մասին:

Բելգրադի կինոյի ինստիտուտի գլխավոր մենեջերի եւ միջազգային փառատոնի ծրագրերի տնօրեն Միրոլյուբ Վուկովիչի գնահատականով այդ ֆիլմը, Միլչո Մանչեւսկիի «Անձրեւից առաջ», Էմիր Կուստուրիցայի «Ընդհատակ» եւ Դանիս Թանովիչի «Չեզոք գոտի» ֆիլմերի հետ նույն թեման՝ Հարավսլավիայի տարանջատումը ուղեկցող լավագույն նմուշներից է: «Դրանք բոլորն էլ խորը վերլուծության են ենթարկում նախկին Հարավսլավիայում ապրող մարդկանց հոգեբանությունը, մտածելակերպը, հավատն ու նախապաշարմունքները»:

«Պասկալեւիչը հոգեբանական իրավիճակները հասկանալու ու ճնշարկելու չափազանց նուրբ զգացողություն ունի: Նա կարողանում է տեսնել, թե ինչպես է հասարակությունը ազդում անհատի վրա, եւ թե ինչպես է այդ նույն անհատն իրեն դրսեւորում անսանելի հանգամանքներում», իր հերթին նշում է թանգարանի մեկ այլ աշխատակից:

Այդ տրավորության լավագույն օրինակ կարող է ծառայել Պասկալեւիչի 2004թ. նկարահանած «Միջձմեռային գիշերվա երազ» ֆիլմը սերբ գինվորի մասին, որը վայրագություններ տեսնելուց հետո որպես դասալիք վերադառնում է Բելգրադ ու տեսնում, որ իր բնակարանում ապրում է մի կին՝ իր թերզարգացած դստեր հետ: Այդ դերի համար նա գտնում է իրոք թերզարգացած մի աղջկա (Ջուվանա Միտիչ)՝ ցույց տալու ոչ միայն այդ կերպարի բնական լինելը, այլեւ այլաբանությունը՝ Սերբիայի անհատնում խնդիրների իրականության:

Պասկալեւիչը նախընտրում է նայել դեպի ապագան, չնայած իր ֆիլմերում այդ ապագան միշտ չէ, որ պայծառ է: «Թանգարանի դահլիճներում ցուցադրվող ֆիլմերի թվում են «Մեկ ուրիշի Ամերիկան», որտեղ Թոմ Կոնտիի կողքին խաղում է նրա սիրած «Արգենտինական տանգո» ֆիլմի դերակատար Միկի Սանոլովիչը, 2006թ. նկարահանած «Լավատեսները» ֆիլմը ու կարճամետրաժ՝ «Լաստի լեգենդը» ֆիլմը (1972), որում պատկերվում է մեծահասակներից ձերբազատվելու դաժան մեթոդները, ըստ սերբական դիցաբանության:

«Եվրոպայում սերբ կինոռեժիսոր լինելը չափազանց դժվար է», խոստովանում է Պասկալեւիչը: Նյու Յորքում ապրող, Սարաեւոյի կինոփառատոնի ծրագրերի համակարգող Հոուարդ Ֆայնսայնի խոսքով նա միակ ռեժիսորն է, որը չի խուսափում Բոսնիայի մահմեդականների նկատմամբ սերբերի գործած վայրագությունները նրբորեն ցույց տալուց: Այսուներն, ըստ նրա, առավելապես տարած են դրանից վատ զգալով ու Կոսովոյում իրենց ռմբակոծելու համար ՆԱՏՕ-ին մեղադրելով:

Մեսրոպոլիտենում կազմակերպված այս ցուցադրումներով ու «Հատուկ վերաբերմունք» ֆիլմը վերանկարահանելով Պասկալեւիչը հույս ունի նոր հորիզոններ բացել «Մեդիամիս» վերնագրով սերբալեզանական համատեղ արտադրության նոր ֆիլմ ստեղծելու համար: «Բայց մինչ այդ պետք է սպասենք տեսնելու, թե ինչ է տեղի ունենալու Կոսովոյում: Ի վերջո, մենք պետք է ի վիճակի լինենք միասին ապրելու», եզրակացնում է նա:

Կադր «Բալկանյան կաբարե» ֆիլմից

Թարգմ. Հ. ԾՈՒՆԴԱՍԵՐԻՆԸ

Ֆելինին իր ֆիլմերը չի ենթարկում խոսքային նկարագրության

Գրանց մասին պատմելը նույնն է, թեշ կտավի, կամ պարտիտուրի մասին

Ստորեւ ներկայացնում ենք հատվածներ իտալացի ժեժանում կինոռեժիսորի Ֆեդերիկո Ֆելինիի «Կինոպատում» գրքից

Իմ կարծիքով մարդը պետք է ձգտի անել այն, ինչ կարող է, իսկ ավելի կարեւոր է՝ ժամանակին որոշել, թե հատկապես ինչ է կարող: Անհրաժեշտ է միշտ հիշել սեփական հնարավորությունների սահմանների մասին, որովհետեւ մեզանից ամեն մեկն ունի իր բարձրակետը: Հավանաբար ինձ համար ու նաեւ իմ գործի համար ավելի օգտավետ է աշխատել այն ասպարեզում, որ, թվում է, կարող եմ իմ խոսքն ասել, որտեղ դրա համար անհրաժեշտ միջոցներ կան: Եթե քաղաքականություն ասելով հասկանանք մարդկանց երջապատում ապրելու, աշխատելու հնարավորությունը, որ յուրաքանչյուր ոք հարգում է ինքն իրեն ու հասկանում, որ անձնական ազատությունը վերջանում է այնտեղ, որ սկսվում է ուրիշների ազատությունը, ապա թերեւս իմ ֆիլմերը նույնպես քաղաքական են, քանի որ խոսում են հենց դրանց մասին, թեկուզ ներկայացնելով այն աշխարհը, որ այդ ամենը չկան: Կարծում եմ, իմ բոլոր ֆիլմերը մերկացնում են նախապաշարումները, ծոռոմաբանությունը, սխեմատիզմը, մեզանում տարածված դասակարգության նորերի ու դրանց հետեւանքով ստեղծված իրավունքների սնանկությունը:

Ինձ թվում է, իրենք գործի ծառայելիս, առայժմ ծայրաստիճան վտանգավոր է անկեղծորեն խոսել ինչ դրվելու անհրաժեշտության, նվիրվածության, բարի կամքի, ընդհանուր նպատակների մասին: Լսելով նրանց, ովքեր այդ ամենից հետեւելու կոչ են անում, մենք անմիջապես ընկնում ենք ինֆանտիլիզմի մեջ եւ այնժամ ծագում է թուլանալու, այդ զրույցներին հավատալու վտանգը, այն էլ՝ մահացու վտանգը: Եվ իսկույն հայտնվում է մեկը, որը պատրաստ է օգտվել մեր այդ վիճակից ու մեզ ստիպել ամեն ինչ վերադարձնել սկզբից՝ նույն սխալների, տարակուսանքների, դաժանությունների կրկնությամբ: Թերեւս ստի մերկացումը, կամ կեղծի բացահայտումն առայժմ փրկության միակ (թեպետ ոչ այնքան հուսալի) միջոցներն են, որ ունի մեր սնանկ պատմությունը:

«Ամարկորդ» ֆիլմի գավառական Իտալիայում մենք բոլորս (սկսած հեղինակից) կարող ենք մեզ ճանաչել այն տգիտությունից, որի մեջ ընկղմված ենք: Մեծ տգիտություն, մեծ խառնաշփոթություն:

Ինչո՞ւ եք ուզում իմանալ, թե ինչ ֆիլմ եմ պատրաստվում նկարահանել: Ընդհանրապես կարիք չկա պատմել ֆիլմերի մասին: Նախ այն պատճառով, որ ֆիլմն իր բնույթով չի ենթարկվում խոսքային նկարագրության, դա նույնն է, թե փորձենք պատմել նկարը կամ երաժշտական ստեղծագործության պարտիտուրը: Ու նաեւ այն պատճառով, որ ֆիլմի մասին մանրամասն խոսելիս կարող ես գերի դառնալ կոչյուն վարկածներին, որոնք կինոերկը կապում են որոշակի կերպարների սխեմաների, հայկանիշների հետ՝ ամեն բան անխուսափելիորեն պարզունակեցնելով, գռեհկացնելով: Եվ այդ ժամանակ ենթարկվում ես որ քիչական ֆիլմը չճանաչելու վտանգին, կամ որ ավելի վատ է՝ կարող է այնպես պատահել, որ պարհասարակ մոռանաս, թե դա որ ֆիլմն է:

Ինչ է հոտը: Հաճախ եմ ինձ այդ հարցը տվել ու պատասխանը փորձառած գտել: Իմ աղջեւ հառնում է խոշոր կարմրավուն մի կերպարանք, որն ինչ-որ բանով հիշեցնում է Սորդիին, Ֆաբրիցիին, Մանչանիին՝ մոայլ ուշադրությունը կենտրոնացրած գաստրոնոմ սեխուալ հարցերի վրա: Եվ այնուամենայնիվ, այդ կերպարում ինչ-որ սփոփիչ բան կա: Սփոփիչ, որովհետեւ հոտը ամեն մարդու թույլ է տալիս մտքով համբառնալ ուզածի չափ բարձր:

Պատրաստեց
ՌՈՒԶԱՆՆԱ ՊԱՐԱՆՅԱՆԸ

Կատրին Դընյով. Հիասթափությունների հավերժահարս

ՌՈՒԶԱՆԻԿ ԹԱՄՐԱԶՅԱՆ

«Ինչն է բնորոշում ասպերին մարդկանց ենթագիտակցության մեջ. առաջին հերթին՝ գունատությունը, մաշկի այն յուրահատուկ ծյունաձերմակ գունատը: Բավական է հիշել Գրետա Գարբոյի, Մալլեն Դիտրիխի, Ինգրիդ Բերգմանի անունները եւ անմիջապես մեր առջեւ է գալիս այդ ելացուցիչ գունատությունը, ճառագայթող լույսի հոսքի զգացողությունը, որ նրանց դարձնում է այնման առեղծվածային: Ինչո՞ւ են ասպերը առեղծվածային. այս հարցին ես ունեմ իմ՝ մասնագիտական պատասխանը, եւ այն հենց այդ ճառագող ճերմակի մեջ է, որ թվում է բացարձակ իր ակնհայտության մեջ՝ պարզ ուղղված հայացքներին: Մութը, խավարը կամ թեկուզ կիսամութը երբեմն չեն կարող ունենալ առեղծվածի այն ուժը, որով լույսը գերում ու դիմադրում է մեզ: Որպիսեւ որեւ այն ակնհայտ եւ անսխալ է թվում, այնման անթափանց է: Սա է ասպերի գաղտնիքը. շողարձակող, բացահայտ ու միեւնույն ժամանակ անորսալի», նշում է կինոնկարահանման լուսանկարիչ Կառլին Շամպերյեն՝ ֆրանսիական «Նոր ալիքի» ամենաբանաստեղծական ռեժիսորներից Ֆիլիպ Գարելի «Գիշերվա քամին» ֆիլմի առիթով տված հարցազրույցի մեջ:

Կադր «Ցերեկային գեղեցկուհին» ֆիլմից

Դժվար կլիներ թերեւս ֆրանսիական կինոյում գտնել մի դերասանուհու, որն իր կերպարով ու գծած ուղեծրով նույնքան ճշգրիտ ու սպառիչ հաստատումը թվար Կառլին Շամպերյեի դիտարկման, որքան Կատրին Դընյովը: Անցած տարվա մարտի 8-ապրիլի 2-ը ֆրանսիական կինոդարանը ցուցահանդեսների, կինոցուցադրումների ու հրապարակումների մի ամբողջ շարք էր նվիրել դերասանուհուն: Այստեղ առաջին շրջանի ֆիլմերի հետ՝ անմոռանալի ծյունաձերմակ կիսադեմով, որ շատ արագ համաշխարհային հռչակ բերեց դերասանուհուն, («Շերբուրգյան հովանոցներ», ռեժ. Ժակ Դրմի, 1964թ, «Էշի կաշի»՝ Ժակ Դրմի, 1970թ, «Տրիստանա»՝ Լուի Բունյուել, 1970, «Սողկանի»՝ Ռոման Պոլանսկի, 1970, «Միսիսիպիի սիրենը»՝ Ֆրանսուա Տրյուֆո,1970, «Ցերեկային գեղեցկուհին»՝ Լուի Բունյուել,1967) տեղ էին գտել դերասանուհու կինոկարիերայի երկրորդ շրջանի ֆիլմերը, որոնցում ավելի ու ավելի արտահայված դրսեւորում են ստանում Դընյովի համակրանքն ու հոգաբերությունը հեղինակային կինոյի նկատմամբ:

Հարկ է նշել առանձնապես Անդրե Տեշինեի «Գողերը» 1996, Ֆիլիպ Գարելի «Գիշերվա քամին» 1990, Նիկոլ Գարսիայի «Վանդոմի հրապարակը» 1999, Ֆրանսուա Օզոնի «Ութ կինը» 2001, ինչպես եւ ֆրանսիական մերօրյա հեղինակային կինոյի առաջատար դեմքերից մեկի՝ Առնո Դեպլեշինի՝ մի շարք մրցանակների արժանացած, սեզարակիր շենի՝ մի շարք մրցանակների արժանացած, սեզարակիր շենի՝ մի շարք հարցազրույցների մեջ առանձնակի կարեւորել է նը մի շարք հարցազրույցների մեջ առանձնակի կարեւորել է Կատրին Դընյովի մասնակցությունը ֆիլմին. իր իսկ խոսքերով՝ «համաշխարհային կինոյի պատմությունը շրջած» այդ բացառիկ խիզախության ու հոգու բացառիկ ազատության դերասանուհու ներկայության փաստն ինքնին որեւէ ֆիլմում կինոյի ներին պատմության բազմաթիվ շերտեր է արձարձում՝ սանձելով խորհրդանիշի, համր մի դաշինքի արժեք իր ծում՝ սանձելով խորհրդանիշի, համր մի դաշինքի արժեք իր ծում՝ եւ առհասարակ իր սերնդի ռեժիսորների համար: Առնո Դեպլեշինի հաջորդ՝ «Ամենորյա հեքիաթ» ֆիլմը (2007), որ դեռ լեշինի հաջորդ՝ «Ամենորյա հեքիաթ» ֆիլմը (2007), որ դեռ չի հայտնվել էկրաններին, հերթական «դաշինքն» է երիտասարդ ռեժիսորի ու ֆրանսիական կինոյի ծյունաձերմակ սարդ ռեժիսորի ու ֆրանսիական կինոյի ծյունաձերմակ սարդ ռեժիսորի ու ֆրանսիական կինոյի ծյունաձերմակ կակուտի միջեւ: Այս ֆիլմում, որ պատմություն է հայրերի ու զավակների, ինչպես եւ Դեպլեշինի բոլոր ֆիլմերը, Կատրին Դընյովը կերտում է ֆիլմի առանցքային՝ մոր կերպարը:

Երկրորդ շրջանի ֆիլմերը առաջին հայացքից նոր, վերափոխված եւ առավել ընթեռնելի Դընյով են մատուցում հանդիսատեսին. թվում է, անշնչան փոխվել են ձայնի տեմբրը, ասղային գունատությունը: Սակայն շատ արագ դերասանուհու խաղի հանդուգն ոիթմը, որ չի ենթարկվում ոչ մի տրամաբանության, ոչ մի հոգեբանական կաղապարի, սահուն անցումները սահմանից սահման ցրում են այդ առաջին տպավորությունը. մեր առջեւ միեւնույն չկախարդվող շողարձակումն է:

Մեն է Կատրին Դընյովի հարակեցության գաղտնիքը: Դժվար կլիներ համաշխարհային կինոյի պատմության մեջ գտնել որեւէ մեկին, որը նույնպիսի հեշտությամբ դերասանական իր ողջ հռչակը կառուցեր հակասությունների արեւայդուսր. նրա յուրաքանչյուր նոր աշխատանք «հիասթափություն» է կարծես կինոդիտողի համար. մի բան, որի մասին մինչեւ իսկ փաստում է 70-80-ականների ֆրանսիական եւ օտար մամուլը. տարապանն այնքան էլ տարապագին չէ, ինքնանը երբեմ այն պահին եւ այնտեղ չի հայտնվում, որտեղ կարելի է ակնկալել, հայացքը՝ բաց ու հեռու, մարմինը՝ շողարձակող ու սառը: Հայտնի է դերասանուհու շուրջ հյուսված սառնության առասպելը, որում հաճախ են նրան մեղադրել: «Դժվար թե հնարավոր լինի գտնել նման մի հակասություն՝ մեկ այլ դերասանուհու կինոկարիերայում, որն այնքան հանդիմանանքների ու միեւնույն ժամանակ թաղում սիրո տեղիք տված լինի», այս առիթով նշում է կինոքննադատ Սիրիլ Բեգենը:

Մեն է սառնության այդ առասպելի հիմքը. այն համառ անորսալիությունը, որով դերասանուհին դիմադրում է կինոասպին եւ առհասարակ կնոջը վերագրվող չափանիշներին ու պատկերային-արժեքային համակարգին, ընկրկման այն ուժը, որում այնքան հաճախ մեղադրել են նրան քննադատներն ու դիտողները: Սիրենի անխոնջ սահանքը, որով Դընյովը բնակեցնում է դերը՝ հասնելով ներին լարված կիզակետին ու պատկերային-արժեքային համակարգին, ուժ

Հեսահայաց

Աբդուլովի մահը Մարկ Զախարովի առաջին լուրջ կորուստն էր

Հայտնի բեմադրիչ, «Լենկոմ» թատրոնի ղեկավար Մարկ Զախարովը 30 տարուց ավելի ափսոսել է ոչ պակաս հայտնի դերասան Ալեքսանդր Աբդուլովի հետ, որին սկզբնական շրջանում համբավ բերեց Զախարովի «Սովորական հրաշք» ֆիլմը (1978): Խորհրդային եւ ռուսաստանյան արվեստասերների մի քանի սերունդների հերոսի կյանքին վերաբերող բոլոր հիշ հայտնի փաստերի մասին Մարկ Զախարովը պատմել է BBC-ի մեկնաբան Անդրեյ Օստալսկուն տված հարցազրույցում:

- Աբդուլովը շատ խիզախ մարդ էր ու միեւնույն ժամանակ հաշողակ, հանդուգն, գեղեցիկ, խելացի: Նրա մահը երեւի իմ առաջին լուրջ ու հիմնավոր կորուստն էր, քանի որ նրան թատրոն հրավիրեցի, երբ չորրորդ կուրսի ուսանող էր: Նրան անմիջապես տվեցինք տղամարդու գլխավոր դեր՝ լեյտենանտ Պլուժնիկովի դերը: Դա պատերազմի առաջին օրերին Բրեստի ամրոցը հերոսաբար պաշտպանած մարդկանցից մեկի անունն է (ըստ Բորիս Վասիլեւի «Տուցակներում նա չկար» վեպի):

Իսկ հետո թատրոնում նա մի շարք հիանալի ափսեասանիներ կատարեց. մեր թատրոնում խաղաց Սիրլիի դերը՝ «Լավատեսական ողբերգությունում», ապա Գուրինը, ըստ «Շալում Ալեյխեմի» մեզ համար գրեց «Հիշատակի աղոթքն» ու Մենախեմ Մենդելի դերն այնպես կատարեց, որ կերպարը դարձավ կատակերգական: Իհարկե, Աբդուլովը տրագիկոմիկ դերասան էր:

Նա շատ-շատ է նկարահանվել կինոյում, ունի բազմաթիվ ֆիլմեր, եւ ես ինձ մխիթարում եմ այն հույսով, որ իմ «Սովորական հրաշք» հեռուստաֆիլմով ինչ-որ չափով մեծացրել եմ կինեմատոգրաֆիստների հետաքրքրությունը նրա հանդեպ:

- Այո, «Սովորական հրաշքն» առաջինն է, որ հայտնվում է մեր մտքում: Առաջին զուգադրումը սա է. Աբդուլովը «Սովորական հրաշքն» է:

- Նա շատ դժվարությամբ սկսեց. կարգապահության հետ կապված խնդիրներ ուներ: Թատրոնն ընդհանուր առմամբ կառուցված է հասակ կանոններից, իսկ նա որոշ տարբերություններ ուներ... Չնայած դրան, շատ արագ դարձավ առաջատար դերասան, անչափ շատ բան արեց թատրոնի համար: Անկասկած, ուներ բեմադրիչի տաղանդ, առաջարկել է մի քանի արժեքավոր գաղափար: Սկզբում նրա գաղափարները մերժում էի, բայց հետո ասիճանաբար մերժումների թիվը նվազեց, որովհետեւ նրա ռեժիսորական գաղափարներն առաջադիմում էին:

- Հավանաբար, նա պրոցեսը շատ լիարժեք կյանքով: Ասված տա, ամեն ոք հասցնի նույնքան բան անել:

- Կասկածներ ունեմ, թե նա կատարել է իր երկրային ծրագիրը: Իհարկե, դեռ ուներ ուժեր, եռանդ, ցանկություն: Սամարայում եւս մեկ անգամ խաղաց «Հարսանիքում»: Մենք նել էինք հյուրախաղերի, հետո այլեւս չկարողացավ խաղալ, ու մենք նրան փոխարինեցինք:

Թատրոնում ու կինոյում նա դեռ կբարունակեր ափսեասանը, բայց ընդհանուր առմամբ, եթե խոսենք Բարձրյալի ինչ-որ տիեզերական նպատակադրման մասին, ապա նա կատարեց այն, ինչ պետք է կատարեր: Եվ իմ մեջ ողբերգական կորստի զգացումը յուրովի զուգորդվում է երջանկության զգացման հետ, քանի որ ափսեել եմ նշանավոր դերասանի հետ, ինչ-որ բան արել նրա կայացման համար:

Անշուշտ, ժողովուրդը շատ էր սիրում նրան: Թատրոնում եւ զանգվածային լրատվամիջոցներում ստացվող նամակների թիվը պարզապես աննկարագրելի էր: Մարդիկ խորհուրդներ էին տալիս, թե ինչպես հաղթահարի հիվանդությունը... Ես պարզապես զարմացած էի նման համաժողովրդական ուշադրությունից: Անկասկած, նա ռուսական թատրոնի ու կինեմատոգրաֆիայի հանրահայտ դերասաններից էր ու ժողովրդի սիրեցյալը: Հավանաբար, ռուսական մշակույթի երեւույթ էր, եւ նրան դեռ շատ երկար կհիշեն:

- Դուք, իհարկե, համեստություն եք անում, ասելով, թե «ինչ-որ բան եք արել նրա կայացման համար»: Ամենը հասկանում են, որ դուք նպաստել եք նրա տաղանդի ածին, զգալի չափով եղել եք ստեղծագործության մեջ նրա դաստիարակն ու հայրը: Բայց երեւի դժվար էր նրա հետ ափսեասելը: Լուրեր էին պտտվում, թե Աբդուլովն ու Զախարովը վիճում են: Արդյոք եղե՞լ են նման դեպքեր:

- Դե, եղել են բարդություններ, նա խաբել է ինձ: Բայց ես նրան ներում էի, քանի որ այդ հարցում նա շատ զվարճալի էր: Երբ մի անգամ շատ կարեւոր փորձին չներկայացավ, կարծես մեկ ժամից ավելի ուշացավ, ես ասացի. «Սաշա, ինչպե՞ս կարողացար...»: Նա ասաց. «Ես ամբողջ գիշեր նստել էի շատ սիրելի աղջկա մահճակալի մոտ. նա հիվանդ էր», եւ նրա մի աչքից արցունքի կաթիլ հոսեց: Ես նույնպես չդիմացա, արտասվեցի, մենք գրկախառնվեցինք: Բայց երբ 2 օր անց նույն պատմությունը կրկնվեց, հասկացա, որ ինձ դաժանորեն խաբում են, բայց ջանացի ինչ-որ կերպ նրան խելքի բերել: Պետք է ասել, որ այդ ժամանակահատվածը կարճ տեւեց. նա շատ արագ խելքի եկավ... Իսկ հետագայում շատ հավատարիմ մարդ էր:

Նա երբեմն ինձ իրոք հայր էր անվանում, թեեւ ինքը հրաշալի հայր ուներ, որի թատրոնը գոյություն ունի Ֆերգանայում: Բայց ես մտածեցի, որ նրան թատրոն եմ հրավիրել այն ժամանակ, երբ ինքս մոտ 40 տարեկան էի, իսկ նա՝ մոտ 20: Այնպես որ, ես կարող էի նման որդի ունենալ:

- Կանայք նրան շատ էին սիրում:

- Կանայք նրան սիրում էին, բայց դա վտանգավոր էր կյանքի համար: Մի աղջիկ բացականչելով «Ուրեմն, թող ոչ մեկինը չլինես», նրա վրա շաղ տվեց ծծմբաթթու, բայց նա հասցրեց թաքկվել եւ անվնաս մնալ:

Հետագայում գեղեցիկ ամուսնությամբ կապվեց Իրինա Ալֆյորովայի հետ: Այդ գեղեցիկ դերասանուհին երիտասարդ տարիներին մեծ հաջողությամբ նկարահանվել էր, ֆոտոգենիկ էր, սմանչելի: Նրանք հրաշալի զույգ էին: Հիմա արդեն կարող եմ պատմել... Ունեինք մի շատ գործնական փոխտնօրեն: Երբ նա նկատեց, որ ուրվագծվում են ինչ-ինչ փոխհարաբերություններ, որոշեց, որ երկու բնակարանի փոխարեն կարելի է պահանջել մեկը: Եվ նա ինչ-որ ձեւով նպաստեց երկուսի մերձեցմանը: Նրանք, իրոք, ամուսնացան եւ ապրեցին մեկ բնակարանում՝ հուրախություն մեր փոխտնօրենի:

Շատ է խոսվել Աբդուլովի ծանր հիվանդության մասին, բայց նա երկրպագուները միշտ էր խաբում ինչ-ինչ վիճակներից, որտեղ ես թերեւս անզոր էի: Ես անընդհատ մտածում էի, որ գուցե Աբդուլովը մի կերպ ազատվի այդ փորձանքից, բայց... Նա տառապում էր, բայց ոչ այնքիսի ողբերգական տառապանքով, որով մարդիկ երբեմն հեռանում են կյանքից: Մնացին 5 ամսական դուստրը, չխաղացված դերերն ու չնկարահանված ֆիլմը, ինչպես նաեւ մոր խորը տառապանքները: Մեր այնքան արտասվաթոր եմ, նա դիմանկարի մոտ մոմ է վառվում, մի խոսքով ծանր է...

Պատրաստեց
ՊԵՏՐՈՍ ԲԵՇԻՔՅԱՆԸ

Հիշիոի ֆիլմերի հեսահայաց ցուցադրում

Հայաստանի ազգային պատկերասրահի կինոդահլիճում հունվար-մարտ ամիսներին ընդգրկված է 20-րդ դարի մեծանուն կինոբեմադրիչ Ալֆրեդ Հիչկոքի ֆիլմերի հետահայաց ցուցադրությունը: Հոգեբանական եւ արկածային իր բազմաթիվ ֆիլմերի համար Հիչկոքն արժանացել է «Սարտպիի արքա» տիտղոսին: Նրա կինոարվեստին բնորոշ են սեղմ կառուցվածքը, անակնկալ զարգացումները, որոնք տրամաբանական ու համոզիչ մեկնաբանություն են ստանում միայն ֆիլմի ավարտին: Ֆիլմերի դինամիկ կառուցվածքը հագեցած է մարդկային բնավորությունների բացահայտման մեծ հնարավորություններով:

Ալֆրեդ Հիչկոքն այն արվեստագետներից է, որոնք ամենից առաջ ալիքն են ընկնում բարձր պրոֆեսիոնալիզմով: Նա ամենայն բծախնդրությամբ ուսումնասիրել ու ներթափանցել է ռեժիսորական արվեստի ակունքների մեջ՝ ստեղծելով ռեժիսորական իր ուրույն մտածողությունը: Անգլիացի կինոլրագրողներից մեկը նկատել է, որ շատերն են ասել, թե ճանաչում են Հիչկոքին, բայց իշերը կարող են հաստատել, որ խոսել են նրա հետ, կամ գտնվել նրա շրջապատում: Իսկ նրանք, ովքեր ափսեասել են նրա հետ, շատ լավ գիտեն, թե ինչքան մարդամոտ էր նա ու միաժամանակ ինչքան անմատչելի:

Հիչկոքի հոգեբանական դրամատիզմով հագեցած լավագույն ֆիլմերից են «Ռեբեկա»(1940թ), «Կասկած» (1941թ), «Մի կասկածի սվքերը»(1943թ), «Հոթթլվածները» (1946թ), «Պարանը»(1943թ), «Մեծ ալիբին»(1950թ), «Լռության օրենքը» (1952թ), «Կատարյան ոճիրը»(1954թ), «Մարդ, որը շատ բան գիտեր»(1956թ), «Կեղծ մեղավորը» (1957թ), «Վերտիգո» (1958թ), «Փսիխո» (1960թ) եւ այլն:

Ալֆրեդ Հիչկոքը ծնվել է Լոնդոնում 1899-ին, սովորել է Սբ Իգնատիոսի անվան քոլեջում: Ափսեասել է որպես նկարիչ, սցենարիստ, ռեժիսորի օգնական: 1922թ. մասնակցել է Գրահամ Կեսսի «Միշտ ասա քո կնոջը» ֆիլմի ափսեասանիներին: 1925-ին նկարահանել է իր անդրանիկ ինքնուրույն ֆիլմը՝ «Հանուքի պարտեզը», Անգլիայում առաջին հնչյունային՝ «Մեմսմեն» (1929թ) ֆիլմը եւ ավելի քան 25 կինոնկարներ, որոնց թվում «Սպանություն» (1930թ), «Հարաս եւ տարօրինակ» (1932թ),«Երեսունինը աստիճանները»(1935թ), «Սաբոտաժ» (1936թ), «Յամայկայի պանդոկը (1939թ): Վերջին ֆիլմը նկարահանելուց հետո Հիչկոքը մեկնել է Ս. Նահանգներ, որտեղ ստեղծել է երեք տասնյակ ֆիլմեր, նաեւ հեռուստատեսային: Նա մահացել է 1980-ին, Լոս Անջելեսում:

Ռ. Պ.

Բեռլինի կինոփառատոնը կբացվի «Ռոլինգ սթոունզին» նվիրված ֆիլմով

Պատմության մեջ առաջին անգամ «Բեռլինale» կինոփառատոնը կբացվի վավերագրական ֆիլմի ցուցադրությամբ: Փետրվարի 7-ին՝ բացման արարողության ժամանակ, տեղի կունենա նշանավոր բեմադրիչ Մարտին Սկորսեզեի «Shine a Light» վավերագրական կինոնկարի համաշխարհային պրեմիերան: Ֆիլմը նվիրված է «Ռոլինգ սթոունզ» փառաբանված ռոք խմբին: Սպասվում է, որ ներկայացման արարողությանը ներկա կլինեն նաեւ խմբի երաժիշտները:

Այդ երաժշտական ֆիլմի հիմքում 2006-ի աշնանը Նյու Յորքում «Ռոլինգ սթոունզի» տված երկու համերգներն են: Առասպել դարձած երաժիշտների ելույթները նկարահանվել են 16 կինոխցիկներով: «Գեռանիայի ձայն» ռադիոկայանի տվյալների համաձայն, նկարահանված ժապավենի ընդհանուր երկարությունը 150 հազար մետր է: Կինոփառատոնի տնօրենությունը հայտարարում է, որ համերգների դրվագները ընդմիջարկվում են խմբի անդամների հետ հարցազրույցներով եւ արխիվային եզակի պատկերներով:

Իտալական ծագումով ամերիկացի բեմադրիչ Մարտին Սկորսեզեն հայտնի է նախ եւ առաջ իր գեղարվեստական ֆիլմերով: Նրա գործերից են «Տաքսու վարորդ», «Նյու Յորքի հուսակախները» եւ «Ամիսորը»: Սկորսեզեի կինոնկարները հանիցս ներկայացվել են Ամերիկյան կինոակադեմիայի մրցանակի, բայց նա միայն մեկ անգամ է «Օսկար» ստացել: 2007-ին պատվավոր մրցանակի արժանացավ նրա վերջին գործը՝ «Որացողական ֆիլմը, որը կոչվում է «Հեռարձի ուղի չկա. Բոբ Դիլան»:

Բեռլինի 58-րդ կինոփառատոնը տեղի կունենա փետրվարի 7-17-ը: Այդ օրերին Գեռանիայի մայրաքաղաքի տարբեր կինոթատրոններում փառատոնի շրջանակներում կցուցադրվի մոտ 400 ֆիլմ: Հիմնական մրցույթին կմասնակցի 26 ֆիլմ: Անցյալ տարի «Բեռլինալեի» ցուցադրություններին ներկա է եղել 430 հազար կինոհանդիսատես:

Պ. Բ.

Մերֆիի ամուսնությունը սոսկ խորհրդանշական էր

«Երկու շաբաթ առաջ կայացած ամուսնական արարողությունը լոկ խորհրդանշական էր եւ մենք դրանից այն կողմ չենք գնալու», հայտարարել են դերասան էդի Մերֆին եւ բեմադրիչ Տրեյսի Էդմոնդսը, որոնք ֆրանսիական Պոլինեզիայի Բորա-Բորա կղզում Նոր տարվա օրը եղբոջնին հավատարիմ ընկերներ մնալ:

«Մենք սիրում ու հարգում ենք իրար, բայց այս արարողությունը ոչ մի իրավական պարտականություն չի սահմանում», նշել են նրանք: Մերֆին 46 տարեկան է, 6 երեխաների հայր՝ նախորդ հարաբերություններից, Էդմոնդսը՝ 40 տարեկան է: Նրանք սկսել են հանդիպել անցյալ տարի ու նշանվել են հուլիսին:

Հ. Օ.

Լեռնային Ղարաբաղում ընտրում են ԼՂՀ եւ ոչ թե ՀՀ նախագահ

Քարկում այս մասին չգիտեն, չգիտեն անգամ երկրի սահմանադրությունը

Ադրբեջանական արտգործնախարարությունը եւ, ամենայն հավանականությամբ, ոչ միայն հարեւան երկրի այս գեռաբեկությունը, հերթական ապատեղեկատվական խառգարավն են սկսել, թերեւս մեր նախագահական ընտրությունների ֆոնին նախապատրաստական թեյինգ են անցկացնում ադրբեջանական նախագահական ընտրություններից առաջ:

Ինչեւէ, ադրբեջանական խաղական միտքը, ամենայն վստահությամբ, ճգնաժամ է ապրում, քանի որ պարզունակ դատողություններ են արվում այնքիսի հարցերի շուրջ, որոնք հենց ադրբեջանական իրականությունում բացատրելի ու ընդունելի պիտի լինեին: Մասնավորապես, Ադրբեջանի ԱԳՆ լրատվական ծառայության ղեկավար Խազար Իբրահիմը հայտարարել է, թե Ադրբեջանում եւ Հայաստանում նախագահական ընտրությունների գործընթացը «Ադրբեջանի օրենսդրության եւ միջազգային իրավունքի բազմաթիվ խախտումների է բերել՝ կապված Լեռնային Ղարաբաղի հետ»:

Ըստ բազմիցս ապատեղեկատվության հեղինակ դարձած Իբրահիմի, պարզվում է, թե «Հայաստանի օկուպացրած տարածքներում ապրող Ադրբեջանի քաղաքացիները չեն կարող մասնակցել Ադրբեջանի նախագահի ընտրություններին»: Օրենսդրական եւս մեկ խախտում էլ, ըստ Իբրահիմի, «Հայաստանում Լեռնային Ղարաբաղից մարդկանց մասնակցությունն է ընտրություններին եւ Հայաստանում անցկացվող ընտրություններին ԼՂ ժողովրդի մասնակցությունը»:

«Լեռնային Ղարաբաղում ընտրատեղամասեր են ձեւավորվում՝ կապված Հայաստանի ընտրությունների հետ: Մենք չունենք դրա վերահսկողության մեխանիզմներ», ամենայն հավանականությամբ ողբն առ միջազգային կառույցներ է ուղղում Ադրբեջանի ԱԳՆ խոսնակը:

Ամենից առաջ ընդգծենք, որ Հայաստանում ընտրությունների են մասնակցում Հայաստանի քաղաքացիները, եւ Ադրբեջանի քաղաքացիները, մեծագույն ցանկության եւ անգամ միջազգային կառույցների «հորդորների» դեմքում չեն կարող մասնակից դառնալ հայաստանյան ընտական գործընթացներին: Նույն հաջողությամբ նրանք չեն կարող մասնակից լինել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրություններին, որոնց մասնակցում են միայն ԼՂՀ քաղաքացիները:

Արդեն սովորական է դարձել, որ ադրբեջանցիները ոչ մի կերպ չեն հասկանում տարական մի իրողություն. Ղարաբաղը ոչ մի առնչություն չունի Ադրբեջանի Հանրապետության հետ: Ավելին, Ղարաբաղի բնակիչներից ոմանք ունեն Հայաստանի քաղաքացիություն, ոմանք անգամ Միացյալ Նահանգների, եւ ուղղակի զավեշտալի է ադրբեջանական մոտեցումը, ասենք, ԱՄՆ քաղաքացուն Ալիեւի վերընտրության անալրնտանք գործընթացին մասնակից դարձնելու հույսերի առնչությամբ:

Բացի այդ, եթե նույն Խազար Իբրահիմը իսկապես կարող է, ցանկությունների տիրույթում, ԼՂՀ քաղաքացիներին ադրբեջանցի համարել, ապա պետք է գոնե մտահոգվի այն հանգամանքով, որ բնակչության մի մասի ընտրություններին մասնակից չլինելն ուղղակի անարդարություն կառոր է դարձնել ուզածդ քվեարկությունն:

Եվ սա դեռ ադրբեջանական մոտեցման սնանկության մեկ դրվագ է: Հատուկ ադրբեջանական գերատեսչական աշխատակիցների համար մեջբերենք Ադրբեջանի գերագույն օրենքի սահմանադրության մի քանի հոդվածներ քաղաքացիության խնդրի վերաբերյալ: Ըստ այդմ, Ադրբեջանի սահմանադրությունը ամրագրում է, որ քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերն են ծննդյան վկայականը, անձը հաստատող Ադրբեջանի Հանրապետության վկայականը կամ էլ այդ երկրի անձնագիրը: Եվ քանի որ դրանցից ոչ մեկը չունի դարաբաղցին, ուրեմն սնանկ են խոսակցությունները դարաբաղցիների ադրբեջանահայաստակ լինելու մասին:

Ավելին, սահմանադրության 52-րդ հոդվածը սահմանում է, թե ով է Ադրբեջանի քաղաքացի: Ըստ այդմ, Ադրբեջանի քաղաքացի է այն անձը, ով ենթակա է Ադրբեջանի տիրությանը, ունի նրա հետ քաղաքական եւ իրավական կապ, նաեւ փոխադարձ իրավունքներ եւ պարտավորություններ: Ակնհայտ է, որ Լեռնային Ղարաբաղի բնակիչները ոչ մի կերպ չեն կարող տեղավորվել այս սահմանման մեջ:

Ինչ վերաբերում է Հայաստանի նախագահական ընտրություններին Լեռնային Ղարաբաղի բնակչության ենթադրյալ մասնակցությանը, ապա Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը վաղուց ընտրական իր գործընթացներն ունի, այնտեղ ընտրություններ են անցկացվում անկախ հայաստանյան կամ ադրբեջանական ընտրություններից: Եվ չնայած Ադրբեջանը չի ընդունում այդ ընտրությունները, այնուամենայնիվ, դրանք դե ֆակտո գործընթացներ են, որ կարգավորում են Լեռնային Ղարաբաղի կյանքն ու զարգացումը:

Հայաստանյան ընտրություններում էլ դարաբաղյան ծագմամբ ՀՀ քաղաքացիների մասնակցությունը լիովին համապատասխանում է միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին: Բոլոր նրանք, ովքեր ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն եւ ընտրելու կամ ընտրվելու իրավունք, այդ գործընթացի մաս են կազմում՝ կցանկանա դա Ադրբեջանը, թե ոչ:

ԱՐԱՐԱՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Գերընտրություններ» ԱՄՆ 22 նահանգներում

Հոլիվուդի աստղերն աջակցում են թեկնածուներին

Դեմոկրատական եւ Հանրապետական կուսակցությունները փետրվարի 5-ին գաղտնի քվեարկությամբ միջակա ընտրություններ էին անցկացնում ԱՄՆ 19 նահանգներում: Բացի դրանից, դեմոկրատները հրապարակային քվեարկություն էին անցկացնում 3, հանրապետականները՝ 2 նահանգներում: Արդյունքները հայտնի կդառնան այսօր հեսնիգօրերին:

Սակայն առավել զանգվածային միջակա ընտրություններն են ԱՄՆում. 2004-ին ընտրությունները միաժամանակ անցկացվել էին ընդամենը 10 նահանգներում:

Վերլուծաբանները նշում են, որ հանրապետականների միասնական թեկնածուի անունը կարող է հայտնի դառնալ արդեն փետրվարի 6-ին, քանի որ Նյու Յորքի նախկին քաղաքապետ Ռուդոլֆ Ջուլիանիի աջակցության ռուբուիիվ սենատոր Ջոն Մակքեյնը ուրեմն առավելություն ունի նախկին նահանգապետ Միթ Ռոմնիի կին նահանգապետ Մարիա Ալիեւի վերընտրության անալրնտանք գործընթացին մասնակից դարձնելու հույսերի առնչությամբ:

Բացի այդ, եթե նույն Խազար Իբրահիմը իսկապես կարող է, ցանկությունների տիրույթում, ԼՂՀ քաղաքացիներին ադրբեջանցի համարել, ապա պետք է գոնե մտահոգվի այն հանգամանքով, որ բնակչության մի մասի ընտրություններին մասնակից չլինելն ուղղակի անարդարություն կառոր է դարձնել ուզածդ քվեարկությունն:

Եվ սա դեռ ադրբեջանական մոտեցման սնանկության մեկ դրվագ է: Հատուկ ադրբեջանական գերատեսչական աշխատակիցների համար մեջբերենք Ադրբեջանի գերագույն օրենքի սահմանադրության մի քանի հոդվածներ քաղաքացիության խնդրի վերաբերյալ: Ըստ այդմ, Ադրբեջանի սահմանադրությունը ամրագրում է, որ քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերն են ծննդյան վկայականը, անձը հաստատող Ադրբեջանի Հանրապետության վկայականը կամ էլ այդ երկրի անձնագիրը: Եվ քանի որ դրանցից ոչ մեկը չունի դարաբաղցին, ուրեմն սնանկ են խոսակցությունները դարաբաղցիների ադրբեջանահայաստակ լինելու մասին:

Ավելին, սահմանադրության 52-րդ հոդվածը սահմանում է, թե ով է Ադրբեջանի քաղաքացի: Ըստ այդմ, Ադրբեջանի քաղաքացի է այն անձը, ով ենթակա է Ադրբեջանի տիրությանը, ունի նրա հետ քաղաքական եւ իրավական կապ, նաեւ փոխադարձ իրավունքներ եւ պարտավորություններ: Ակնհայտ է, որ Լեռնային Ղարաբաղի բնակիչները ոչ մի կերպ չեն կարող տեղավորվել այս սահմանման մեջ:

Ինչ վերաբերում է Հայաստանի նախագահական ընտրություններին Լեռնային Ղարաբաղի բնակչության ենթադրյալ մասնակցությանը, ապա Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը վաղուց ընտրական իր գործընթացներն ունի, այնտեղ ընտրություններ են անցկացվում անկախ հայաստանյան կամ ադրբեջանական ընտրություններից: Եվ չնայած Ադրբեջանը չի ընդունում այդ ընտրությունները, այնուամենայնիվ, դրանք դե ֆակտո գործընթացներ են, որ կարգավորում են Լեռնային Ղարաբաղի կյանքն ու զարգացումը:

Հայաստանյան ընտրություններում էլ դարաբաղյան ծագմամբ ՀՀ քաղաքացիների մասնակցությունը լիովին համապատասխանում է միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին: Բոլոր նրանք, ովքեր ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն եւ ընտրելու կամ ընտրվելու իրավունք, այդ գործընթացի մաս են կազմում՝ կցանկանա դա Ադրբեջանը, թե ոչ:

ԱՐԱՐԱՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎՏԱՆԳԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

2007-ին զոհվել է 65 լրագրող, այդ թվում 32-ը՝ Իրաքում

Աշխատանքային պարտականությունները կատարելիս 2007-ին աշխարհում զոհվել է առնվազն 65 լրագրող, ինչը ռեկորդային թիվ է վերջին 13 տարիներին: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը, վկայակոչելով Լրագրողների պաշտպանության կոմիտեի (ԼՊԿ) տվյալները:

ԼՊԿ ամենամյա զեկույցը «Հարձակումներ ՁԼՄ-ների վրա» վերնագիրն է կրում եւ հիշեցնում է, որ 2006-ին աշխարհում լրագրողների սպանության 56 դեպք էր արձանագրվել: 2007-ին 65 լրագրողներին 32-ը զոհվել է Իրաքում:

«Թղթակիցներ առանց սահմանների» իրավապաշտպանական կազմակերպությունը զոհերի ավելի մեծ թվեր է արձանագրել, բայց ԼՊԿ-ն հաշվարկի առավել խիստ մեթոդիկայի կողմնակից է:

2007-ին զոհերի թվով երկրորդ տեղում է Սոմալին (7): Հնգական թղթակից է զոհվել Պակիստանում եւ Շրի Լանկայում, երկուական՝ Աղֆանստանում եւ Էրիթրեայում, մեկական՝ Հաիթիում, Պաղեստինյան ինքնավարությունում, Հոնդուրասում, Ղազախստանում, Մյանմայում, Նեպալում, Պարագվայում, Պերուում, Ռուսաստանում, Թուրքիայում, Զիմբաբվեում եւ ԱՄՆ-ում:

Զեկույցի հեղինակներն ընդգծում են, որ Ռուսաստանում մեկ տարում երկու լրագրողներ «ինքնասպանություն» են գործել առեղծվածային հանգամանքներում, իսկ «ինքնասպան տրամադրված ՁԼՄ-ները եւ ոչ կառավարական կազմակերպությունները հետապնդվել են կամ փակվել»:

«Պուտինի օրոք 14 լրագրող է սպանվել մասնագիտական գործունեության կապակցությամբ, ինչը Ռուսաստանը 3-րդ տեղում է դնում մամուլի համար առավել վտանգավոր երկրների շարքում», նշվում է փաստաթղթում:

ԵՄ-ը Կոսովո է ուղարկում 1800 իրավապահների

Սերբիայի նախագահական ընտրությունների ավարտից ընդամենը 1 օր հետո Եվրամիությունը որոշել է Կոսովո ուղարկել դատաստիկանական ուժեր, որոնք այնտեղ փոխարինելու են ՄԱԿ-ի ներկայիս վարչակազմին: BBC-ն հաղորդում է, որ հիբրիդ ուժերի գործունեության առնչությամբ կայացած քվեարկության ժամանակ ԵՄ 27 երկրներից միայն Կիպրոսն է ձեռնպահ մնացել:

ԵՄ ոստիկանների եւ դատական աշխատողների 1800 հոգանոց ուժերը Կոսովոյում կտեղաբաշխվեն՝ ի հավելումն արդեն այնտեղ գտնվող ՆԱՏՕ-ի 16 հազարանոց զորքի:

Կոսովոյում ներկայումս մեծամասնություն կազմող ալբանացիները մտադիր են մոտ ժամանակներս անկախություն հռչակել եւ անջատվել Սերբիայից, չնայած վերջինիս կտրուկ ընդդիմությանը:

Դատաստիկանական ուժերի գործունեության սկզբնական ժամկետը հայտնի չէ, այն պետք է որոշվի ԵՄ արտգործնախարարների հատուկ խորհրդակցությունում: Նախարարների առաջիկա հանդիպումը նախատեսված է անցկացնել փետրվարի 18-ին:

Կոսովոյի ալբանացի վարչապետ Հաշիմ Թաչին BBC-ի թղթակցին հայտնել է, որ անկախության հռչակագիրը կհրապարակվի ԵՄ-ի եւ ԱՄՆ-ի հետ խորհրդակցելուց հետո: Վերջիններս հավանություն են տալիս անկախացման գաղափարին, որին դեմ է Ռուսաստանը:

Կիպրոսը եւ Ռումինիան արդեն հայտարարել են, որ իրենք չեն ճանաչելու Կոսովոյի անկախությունը:

Կոսովոյում Եվրամիության առաքելությունը 205 մլն եվրո կարժենա դրա գործունեության առաջին 16 ամիսների ընթացքում: Դատաստիկանական ուժերի տեղաբաշխումը պետք է իրականացվի 120 օրվա ընթացքում. մնում է որոշել տեղաբաշխման սկզբնաժամկետը:

Ոչ պատշաճական տեղեկությունների ներքո, ԵՄ դատաստիկանական ուժերի ղեկավար է նշանակվելու հոլանդացի դիվանագետ Պիտեր Ֆեյտը, որը 2001-ին ՆԱՏՕ-ի դեսպանորդն էր Բալկաններում:

Ըստ ՄԱԿ-ի ԱԽ 1244-րդ բանաձեւի, Կոսովոն պետք է ենթակա լինի միջազգային վարչակազմի կառավարմանը: Մինչեւ օրս այդ դերը կատարում էր ՄԱԿ-ի վարչակազմը: Սերբական բանակը Կոսովոյից հեռացավ 1999-ին՝ ՆԱՏՕ-ի օդուժի հարվածներից հետո:

ԱՄՆ-ը «ափսոսանք» է հայտնել իրանական հրթիռի արձակման առթիվ

Երեկ «Ազգը» գրեց իրանական արբանյակի եւ տիեզերական ծրագրի գոյության մասին: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ երկուշաբթի օրը Նախագահ Մահմուդ Ահմադինեժադի ներկայությամբ իրականացվել է իրանական տիեզերական մոտիկ հրթիռի փորձնական արձակում: Խոսքը մոտիկ հրթիռի մասին է, որով հնարավոր է երկաբուրգ ուղեծիր դուրս բերել իրանական գիտական արբանյակ, հաղորդում է Իրանի հեռատեսությունը:

ԻՐՆՆԱ գործակալությունն անդրադառնում է ԱՄՆ-ի պատշաճական արձագանքներին: Ազգային անվտանգության խորհրդի խոսնակ Գորդոն Ջենդրոն եւ Սպիտակ տան խոսնակ Դանա Պերինոն, պետքարտուղարության մամլո խոսնակ Շոն Մակորմակը դժգոհություն են արտահայտել իրանական հրթիռի արձակման կապակցությամբ:

Մասնավորապես Պերինոն ասել է, որ արձակումն Իրանին «էլ ավելի կմեկուսացնի մնացյալ աշխարհից»: Շոն Մակորմակը հրթիռի արձակումը «մտահոգիչ» որակելով ասել է, որ իրանցիների նոր տեխնոլոգիաները բարդությունների աղբյուր են ԱՄՆ-ի համար, հանգի «նման են մեծ հեռահարության բալիստիկ հրթիռների արձակման տեխնոլոգիաներին»:

Տարին բուռն է լինելու թատերական նոր ներկայացումներով

ՀՀ մշակույթի փոխնախարար Կարինե Խոդիկյանի հետ զրույցի 2008-ին մեր թատրոններին տրամադրած գումարների, բեմադրությունների, նաեւ՝ նոր ներկայացումների մասին

- Հաճախ են ասում, որ թատրոնը մեռնում է, դահլիճները կիսադատարկ են, նախարարությունն ի՞նչ է անում, որ հազարամյա ճանապարհ անցած թատրոնը «հոգեվարքից» դուրս գա:

- Ոչ է ասել, որ թատրոնը կորցնում է իր հանդիսատեսին: Եթե այն մութ ու ցուրտ տարիներին, լույսի ընդհատումներով, մոմերի ու լապտերների լույսով թատրոնը գոյատեւեց ու դահլիճները լեփ-լեցուն էին, այժմ ինչո՞ւ պիտի այն հեռընթաց ադրի 21-րդ դարում: Մեր հայկական թատրոնը այնպիսի հիմք ու կամք ունի, որ միշտ առաջ կգնա: Երբ ասում են, որ այսօր թատրոնը հեռընթաց է ադրում, ես չգիտեմ, թե որ չափանիշներով են առաջնորդվում, եթե «32 ատամի» կամ «7,5»-ի մակարդակով են համեմատում, ես նրանց առածը ոչ սառադասում եմ, ոչ էլ գեղադասում ու վատաբանում: Եթե այդման գումար, այդպիսի գովազդ ներդրվի մեր յուրաքանչյուր թատրոնի, ցանկացած հաջողված ներկայացման վրա, տեսնի թե ժողովուրդն ինչպես կգնա թատրոն: Ցավոք սրտի, այսօր մեր մշակույթի հերոսը նա է, որ գովազդներում հայոց լեզուն աղճատելով, հայոց լեզվի «հերն անիծելով» գովազդում է, հեռո անեկդոտային հաղորդումներ է անում, որտեղ հաճախ ես որոշս մարդ, որոշս կին, որոշս հայ՝ վիրավորված եմ զգում: Ամենավերջին փողոցային անեկդոտը բերում են էկրան, եթե, իսկ գաղտնի չէ, որ էլեկտրոնային զանգվածային միջոցներն այսօր մարդկային ուղեղների լվացման լավագույն միջոց են ու նրանք էլ դարձել են վերը նշված անճաշակությունների տարածողը: Եթե այդ բոլորը դառնում է չափանիշ, որ այդ անեկդոտային իրավիճակների դերակատարը հանկարծ դառնում է «աստղ» ու հաղորդավար դոլարներ են ծախսում դրանց գովազդն ապահովելու վրա, պարզ է, որ նրանց դահլիճները լիք կլինեն: Սա հաղորդակցության խնդիր է, ոչ միայն մշակույթի, այլեւ կրթության նախարարության, հեռուստատեսության, մեծության ու պետական անվտանգության խնդիր: Մի ծաղկով գարուն չի գալիս ու ինչպես էլ մշակույթի նախարարությունը կոկորդը պատռի ու ասի, օրինակ, Հ. Մալյանի թատրոն-սուտդիայում Նարինե Մալյանն ունի արտակարգ ներկայացում՝ Աղասի Սյվազյանի «Տեղի ֆիզիոլոգիան», այդ ծայնը կմնա փոքր երգանակներում, քանի որ չկան վերը նշված ռեսուրսներն ու գումարները, եւ նրանք այսօրվա հերոսը չեն: Այդ չափանիշը պետք է դրվի պետականորեն: Մենք չունենք մեր ազգային իդեալը, ո՞վ է մեր այսօրվա հերոսը, ունենք... Եթե ունենք, արդեն պետք դուրս գալիս փողոց ու հարցնենք պատահական անցորդին ու կիմանանք, որ այսօրվա հերոսը հանկարծակի հարուստացած, աղճատված լեզվով խոսող մեկն է, դրա համար էլ այսօր թատրոն չեն տեսնում, որովհետեւ թատրոնում ի

սկզբանե խոսվում է բարու, մարդկայինի, ազնիվի մասին եւ խոսվում է մարոյ հայերենով, որը բաստաերի ականջի համար դարձել է օտարահունչ եւ շատ մարդիկ, պարզապես արդեն իրենց կենսաբանական կոդով չեն կարող հասկանալ այդ ամենը: Սա է մեր իրականությունը, որը շատ վրդովեցնող է...»

- Ի՞նչ է արվում վիճակը շտկելու ուղղությամբ:

- Թատրոնի դերասանների հաստիքները՝ հիմնական կորիզը պահպանվել է, իսկ մնացած գումարները հավասարվում ու տրամադրվելու է որեւէ հայտով, մրցույթով անցած բեմադրությանը: Ստեղծվել է գեղարվեստական խորհուրդ տարբեր արվեստագետներից, հայտարարվել է մրցույթ, որի արդյունքում կբեմադրվի երկու գործ (յուրաքանչյուրին հատկացվել է 1 միլիոն 200 հազար դրամ), որին շուտով ականատես կլինենք: Ցավոք, այդ թատրոնը դեռ շենք չունի (նախկին շենքը վաճառվեց) ու տարբեր բեմերում է դեգերում մինչեւ...

- Ինչ ճակատագիր է սպասվում աղմկահարույց «Երաժշտական կամերային թատրոնին»:

- Առայժմ դա այդպես էլ կոչվում է, բայց անվանումը փոխելու խնդիր կա: Այս թատրոնն ունի շենք ու այստեղ նույնպես մրցութային կարգով կբեմադրվեն պիեսներ ու հնարավորություններ է տրվելու այն ռեժիսորներին, ովքեր մշտապես այս կամ այլ թատրոններում չեն աշխատել: Իսկ անվանման հարցում չենք ուզում շտապել: Գուցե մյուզիքլ անվանումը ճիշտ չէր, ինչեւէ, չշտապենք ու տեսնենք, թե 1-2 տարում թատրոնն ինչ ուղղությամբ կգնա...

- Ինչո՞ւ պետական մրցանակի որեւէ թատրոն չարժանացավ:

- Ի սկզբանե սխալ էր կինոն ու թատրոնը միացնելը, ո՞վ է այդ սկզբունքը դրել, ինչո՞ւ 9 անդամներից միայն կեսն է թատրոնի մասնագետ, մյուսը՝ կինոյի: Սխալ է դա: Ինչո՞ւ չի առանձնացվում ու հաստատվում ուշադրություն չի ցուցաբերվում: Անգամ ասեմ, ես ի պատոնե չգիտեմ, թե ովքեր են հայտեր ներկայացրել, քանի որ ոչ մի տեղ այդ մասին չի նշվում, թափուր է պահվում, ինչո՞ւ հավասար պայմաններ չեն տրվում բոլոր բնագավառներին: Այ, երբ այս ինչուների պատասխանները կտրվեն, այդ ժամանակ էլ ես կնշեմ, թե ովքեր էին արժանավորները՝ պետական մրցանակ սանալու, թե չէ...:

2008-ին թատրոնների համար միջոցներ ձեռք բերելու համար գումարներն ավելացել են՝ դառնալով 2 միլիոն 500 հազար, նախկինի՝ 500 հազարի փոխարեն, որը կնպաստի դրամատուգիայի ու թատերության զարգացմանը: Ալ. Սպենդիարյանի անվ. օպերայի եւ բալետի թատրոնին՝ «Ալմաս» օպերայի համար տրված է 27 միլիոն, Ա. Խաչատրյանի «Սպարտակ» բալետին՝ 20 միլիոն դրամ: Կարծում եմ, մենք այսօր պատրաստ չենք «Սպարտակ» բեմադրելու՝ մարդկային ռեսուրսներ չունենալու պատճառով եւ ունենք խնդիրներ»:

Փոխնախարարը զուգահեռներ անցկացրեց Գրիգորովիչի բեմադրած «Սպարտակի» հետ: Ես չեմ ուզում, որ պեսությունը գումար տա եւ վերջում պարզվի, որ սացվել է եթե ոչ գավառական, պարզապես մեր երգածին համարժեք ինչ-որ մի բան, որը ոչ մեկին չի ուրախացնի»:

Սունդուկյանի թատրոնին հատուկ պետպատվեր է իջեցվել՝ 5 միլիոն դրամի չափով, Սարդարապատի ճակատամարտի հոբելյանին ստեղծված դրամատիկ գործի բեմադրության համար: Հայտարարված մրցույթում 2 հայտ է եղել, որոնք չեն ընդունվել ու սահմված մրցույթը եւս երկու ամսով երկարաձգվել է: 16 միլիոն 200 հազար դրամ է հատկացվել թատերական բեմադրություններին աջակցելու համար, եւ որին կարող են մասնակցել ոչ միայն պետական թատրոնները, այլեւ հանրապետությունում գործող բոլոր թատրոնները: Այնքան չեն արվել միջազգային փառատոները, որից «Արմենոյին» կտրամադրվի 4 միլիոն դրամ, «Հայֆեստին»՝ 35 միլիոն, իսկ Ծաղկաձորում անցկացվելիք մնջախաղի միջազգային անդրանիկ փառատոնին՝ 8 միլիոն 108 հազար դրամ: 3 միլիոն 500 հազար տրամադրվել է միջազգային թատերական փառատոներին մասնակցելու համար, 6 միլիոն՝ հանրապետական թատերական փառատոներին՝ «Նոան հատիկ»՝ 2 միլիոն, «Երիտասարդական թատերական երրորդ փառատոնին»՝ 2,5 մլն, «Տիկնիկային հանրապետական չորրորդ փառատոնին»՝ 2 մլն, «Թումանյանական օր» փառատոնին՝ 4 մլն: Մինչեւ թատրոնը չստեղծի լավ բեմադրություն, թատրոնը չպարտի թատերական մթնոլորտում, չի կարող իր կայուն հանդիսատեսն ունենալ»: Տկն Խոդիկյանն առիթն օգտագործեց եւ շնորհավորեց թատրոնի մարդկանց՝ Թատրոնի միջազգային օրվա առիթով ու մաղթեց, որ բոլորը շարունակեն այնպիսի խանդավառությամբ աշխատել, ինչպես որ կան ու արժանվայելս գնահատվեն:

ՄԱՐԻՈՆԱ ՄԱՐԱՐՅԱՆ

Բրիտանացի պատմաբանը միանում է Հայկական ուսումնասիրությունների կենտրոնին

«Արմինյ միրոր սփեթթյեր» շաբաթաթերթը տեղեկացնում է, որ Մանչեստրի (Մեծ Բրիտանիա) համալսարանից դոկտ. Ջոան Լեյկոը հրավիրվել է եկ Արթուր Միլիգան համալսարան՝ զբաղեցնելու Սանուկյան-Սիմոն հիմնադրամի ֆինանսավորմամբ նորաստեղծ «հեռդոկտորական շրջանի ուսումնասիրողների» պատասխանը՝ հայկական ծրագրերի բաժնում:

Լեյկոը վերջին շրջանում զբաղված է եղել հայկական հարցերով, հատկապես հայրենիք-սփյուռք եւ խորհրդային հայաստան հայրենադարձության խնդիրներով: Նրա դոկտորական ատենախոսության թեման եղել է «Անգլո-ֆրանսիական գիտական շրջանակները հայերի մասին 19-րդ դարի վերջին եւ 20-րդի սկզբներին: Նրանց վերաբերմունքը հայոց ցեղասպանության»: Նրա «Հայաստան: Փախստականների ճգնաժամի ներկայացումը ազգային եւ միջազգային մակարդակներով» հոդվածը (Պիտեր Գասրելի հանձնարարությամբ) ընդգրկվել է 2004-ին հրատարակված «Բնակավայրեր: Պատերազմը, բնակչությունը եւ պետականությունն խնդիրներով: Նրա դոկտորական ատենախոսության թեման եղել է «Անգլո-ֆրանսիական գիտական շրջանակները հայերի մասին 19-րդ դարի վերջին եւ 20-րդի սկզբներին: Նրանց վերաբերմունքը հայոց ցեղասպանության»: Նրա «Հայաստան: Փախստականների ճգնաժամի ներկայացումը ազգային եւ միջազգային մակարդակներով» հոդվածը (Պիտեր Գասրելի հանձնարարությամբ) ընդգրկվել է 2004-ին հրատարակված «Բնակավայրեր: Պատերազմը, բնակչությունը եւ պետականությունն խնդիրներով Արեւելյան Եվրոպայում եւ Ռուսաստանում 1918-1924 թվերին» հատորում, որը խմբագրել են Նիկ Բարոնը եւ Պիտեր Գասրելը:

Իր նոր պատասխանում Լեյկոը ուսումնասիրելու է 1878-1925 թվերի պատմությունը եւ դասախոսություններով հանդես է գալու ինչպես համալսարանի, այնպես էլ լայն հասարակության առաջ:

Հ.Ծ.

ԳԵՂԱՐՎԵՍՏ ՍԱՄՈՒԵԼ

«Ortr» հայությանը հետաքրքրող թեմաների եւ անշանց մասին

«Ortr» համաեվրոպական անկախ ամսագրի ինչպես մյուս բոլոր, այնպես էլ հերթական համարում ընթերցողին ներկայացվում են ամենատարբեր ոլորտներում իրենց գործով ճանաչված հայերի հետ հարցազրույցներ, անցյալի իրենց գործունեությամբ այսօր էլ փայլող մեր հայրենակիցների անցած ուղին եւ Հայաստանում ու այլուր հայությանն առնչվող կարեւորագույն իրադարձություններ: «Ortr»-ը բարեխղճորեն պատմում է հայրենիքում եւ դրանից դուրս ապրող հայերի ու նրանց հետաքրքրող իրադարձությունների, երեւույթների մասին, հետեւաբար ընդգրկումը լայն է, բովանդակությունը՝ բազմազան:

«Վարդեւ Եղիայան» փաստաբանական գրասենյակի ղեկավար Արման Բաղդասյանը հարցազրույցում տեղեկացնում է, թե ինչ ժամկետներում եւ ինչ կարգով ու փաստաթղթերի հիման վրա «ԱՔՍԱ»-ի ժառանգորդները կստանան իրենց գումարները: «Մենք չենք ակնկալում, որ մարդիկ այսքան տարիներ անց այդ ապահովագրության թղթերն ունենան, հետեւաբար բավական է որեւէ ձեւով նախնիների հետ ժառանգական կապը ապացուցեն: Իսկ եթե ոչ մի փաստական ապացույց չունեն, ապա գոնե կարող են դիմումագիրը լրացնել եւ մի նամակով պատմել իրենց ընտանիքի պատմությունը: 17.5 միլիոն դոլարից շուրջ 11 միլիոնը պետք է տվի դիմումագիրներին: Այնպես որ, եթե ամեն ինչ նորմալ ընթանա, մոտ մեկ տարի անց՝ 2009-ի սկզբին, դրամների հատուցումները կսկսեն: Մեր ցանկությունն է, որ առավելագույն թվով մարդիկ դիմեն, եւ ակնկալում ենք, որ առնվազն 10 հազար դիմում կներկայացվի հանձնաժողովին», ի թիվս այլ մանրամասների տեղեկացրել է Արման Բաղդասյանը:

«Չեխիայում արդեն կան մարդիկ, ովքեր հարեւանին նայելով մտածում են, թե ինչ ներդրում կարելի է անել Հայաստանում», հարցազրույցում ասել է Չեխիայի արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ Տոմաս Պոյզը: Նա նաեւ տեղեկացրել է, որ ընթացիկ տարվա հունվարի 1-ից գերմանական կամ «շենգենյան» մուտքի վիզա ունեցող Հայաստանի քաղաքացիները կարող են այցելել նաեւ Չեխիա: Այդ երկրի արտգործախնամախարարը ափսոսանք էլ է հայտնել. «Ցավոք, մենք միայն Վրաստանում ունենք դեսպանություն, բայց հուսով եմ, որ մի քանի տարի անց դեսպանություն կբացենք նաեւ Հայաստանում եւ Ադրբեջանում: Այդ ժամանակ չեխական ընկերություններն ու ոչ կառավարական կազմակերպություններն էլ ավելի ակտիվորեն կկարողանան ներկայացվել Հայաստանում»:

Երեւանի քաղաքապետ Երվանդ Զախարյանն իր եռագանի մասին է պատմել «Ortr»-ի ընթերցողին. «Երազանքս է Երեւանը տեսնել կանաչի մեջ: Երբ խաղաղ հարուս քյուջե կունենա, խաղաքաղաքը մի օր որոշում կկայացնի՝ փոխհատուցել օդերայի շրջակայքի սրճարանների սեփականատերերին եւ հանել այդ բոլորը, դարձնելով ծառերով, ծաղկներով զեղեցիկ զբոսայգի»: Երազանքն այս ոչ վաղ անցյալում իրականություն էր ու ներկայիս քաղաքաքաղը վստահ է, որ ոչ ուշ ապագայում էլ այդպիսին կդառնա, իսկ այսօր ֆինանսական միջոցները բավարար չեն. «Բայց, որ դա կլինի, համոզված եմ»: Երվանդ Զախարյանի հետ հարցազրույցում այլ հետաքրքրական դրվագներ էլ կան: Պակաս ուշագրավ չէ փիլիսոփայական «ճիշությունների թեկնածու Լյուդմիլա Հարությունյանի հետ զրույցը, որում արծարծվում են այն հարցերը, որոնց լուծումը մեծապես նպաստելու է, բանախոսի խոսքով ասած, որ դրոշդ չդարձնեն ողորմելի մի լաթ:

Դերասան Վարդան Պետրոսյանի ստեղծագործական ընթացքին հետեւող հանդիսատեսն «Ortr»-ից կարող է տեղեկանալ այս տարվա նրա անելիքին, որ ներառում է Երեւանում ներկայացումով եւ հյուրախաղերով Իրանում ու Կանադայում հանդես գալու ծրագիր: «Վերելք» ներկայացման մասին զրույցի համատեքստում ներկայացված են նաեւ դերասանի անձնական կյանքից, մանկությունից եւ որոշս անհասականություն ձեւավորվելու ընթացքին նպաստած դրվագներ: Դերասանը հարցազրույցում տեղեկացնում է. «Ամեն մի ներկայացում ինձ համար եղել է խիզախում: Բայց ամենահանդուգն ներկայացումն ինձ համար եղել է «Վերելք»: Ամենաառաջադեմ եւ ամենահանդուգն ներկայացումն է, թեեւ ես դժգոհ եմ ինձանից հենց այդ ներկայացման մեջ: Սակայն ամենամեծ ընդունելությունը, ամենաքնդգրկող ծափահարությունները ես սացել եմ այս ներկայացման համար: Սա միակ ներկայացումն է, որի ավարտից հետո մարդիկ մնացել են դահլիճում եւ շարունակել են ծափահարել: Միավորման մի ուժ է տվել, որ մարդկանց սահմել է կանգնած մնալ տեղում»:

Հետաքրքրական տեղեկություններ է հրապարակել ամսագիրը լաստվիական բալետի հայազգի մեծ տիկնոջ՝ Ելենա Տանգիեւա-Բիրզնիեկի եւ հայ-գերմանական բարեկամության խորհրդանիշ հանդիսացող արդեն Անդրեաս Ուրուսու մասին: Արտակարգ գեղեցկության եւ արհեստական մեծ ձիրքի տեր Ելենա Տանգիեւա-Բիրզնիեկը 1927-1937 թվականներին եղել է Լաստվիական օպերային թատրոնի առաջին մենապարուհին, որի մասին մամուլում գրել են. «Հենց սկսում ես կարդալ այս տիկնոջ կենսագրությունը, հենց նայում ես նրա լուսանկարներին՝ հոգիդ լցվում է: ...Այդպիսի աչքերով կանայք պատմության մեջ են անցնում: Նրանց մասին գրեր են գրում եւ ֆիլմ են նկարահանում, «բալո» են գրում: Իսկ նրանց հարդարանքը տարեդարձ հարդարձություն է դառնում նույնիսկ բոլորովին օտար մարդկանց համար»: Հենց այդպիսին եղել է Ռիգայում Ելենա Տանգիեւա-Բիրզնիեկի տարեդարձի միջոցառումը: Անդրեաս Ուրուսու ծննդյան 160-ամյակը նույնկերդ ընդունվել է Գերմանիայի Բոխում քաղաքում: Քիմիկոս գիտնականի գործունեությունն այնքան ընդգրկուն ու ծանրակշիռ է եղել, որ մինչեւ օրս ոգեւորում է ոչ միայն տվյալ ոլորտի մասնագետներին:

Ներկայացված եւ այլ հետաքրքրական հրապարակումների մասին կարող եք ծանոթանալ «Ortr» ամսագրի հերթական համարից:

ԼԵՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հուսադրող սկիզբ

ՀՀ հավաքականի հաջող մրցելույթները լավատեսություն են տրամադրում

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը գեռազանց է հանդես գալիս Մալթայում ընթացող միջազգային մրցաշրջանում: Մալթայի (1-0) եւ Բելառուսի (2-1) հավաքականների նկատմամբ տոնած հաղթանակների շնորհիվ մեր ընտանին 6 միավորով մրցաշրջանի առաջատարն է: Մրցաշրջանում հաղթող ճանաչվելու համար հայ ֆուտբոլիստներին բավարարում է նույնիսկ ոչ-ոքին իսլանդացիների հետ այսօր կայանալիք մրցավեճում:

Ընթերցողներին ներկայացնենք Բելառուսի հավաքականի հետ հանդիպման որոշ մանրամասներ: Մալթայի հավաքականի հետ հանդիպման համեմատ մեր ընտանու մեկնարկային կազմում ընդամենը մեկ փոփոխություն էր տեղի ունեցել: Վահագն Մինասյանի փոխարեն

խաղում էր փյունիկցի երիտասարդ ֆուտբոլիստ Կառլեն Մկրտչյանը: Խաղասկիզբն անցավ հավասար պայքարում, սակայն արդեն 5-րդ րոպեին դարպասապահ Մայիս Ազիզյանի կողմից սխալի պատճառով Վլադիսլավ Գլեբը բացեց հաշիվը: 11 րոպե անց բելառուս ֆուտբոլիստները կարող էին կրկնապատկել հաշիվը, սակայն Ռոման Վասիլյուկը լավ փոխանցում ստանալով Բուլգայից, վրիպեց նոպասավոր դիրքից: Քիչ անց Արվեն Մկրտչյանի անկյունային հարվածից հետո Առարատ Առաքելյանը գլխի հարվածով վերականգնեց հավասարակշռությունը:

Մինչեւ ընդմիջում բելառուս ֆուտբոլիստները եւս մի քանի վտանգավոր պահ ստեղծեցին մեր հավաքականի դարպասին: Մասնավորապես Մախմուտ Ռոմաշչենկոն անհասկանալի անցումից հետո հուժկու հարված կատարեց, սակայն պատասխանները փակեցին գնդակի ճանապարհը: Իսկ միայն անց արդեն Մայիս Ազիզյանը դրսեւորեց վարպետությունը՝ հետ մղելով վայրջեալ Գլեբի վտանգավոր հարվածը:

Երկրորդ խաղակեսում հայ ֆուտբոլիստներն իրենց ավելի լավ դրսեւորեցին: Առա Հակոբյանի խաղադրաշարում գալով ՀՀ հավաքականի հարձակողական գործողություններն ակտիվացան: Շուտով նա հիանալի փոխանցումով հարվածային դիրքի դուրս բերեց Սամվել Մելոնյանին, սակայն վերջինս չկարողացավ հաղթող դուրս գալ մրցակցի դարպասապահի հետ պայքարում:

76-րդ րոպեին անկյունայինի խաղարկումից հետո Առա Հակոբյանը հարվածեց դարպասին: Գնդակը դիպչելով եգոր Ֆիլիպենկոյի գլխին, շեղեց ուղղությունն ու հայտնվեց դարպասում: Մնացած ժամանակահատվածում մեր ֆուտբոլիստներին հաջողվեց պահպանել հաղթական հաշիվը, թեեւ խաղավարից չորս րոպե առաջ 2-րդ զգուշացումը ստանալով, դաշտից հեռացվեց Ալեքսանդր Թադեւոսյանը: Ընդհանուր առմամբ, ոչ Բելառուսի հավաքականի հետ խաղում մեր ընտանուն նորամուտը նշեց փյունիկցի Արթուր Եդիգարյանը: Մայթացիների հետ խաղում առաջին անգամ ազգային հավաքականի մարզաբաժինը կրել էին Կառլեն Մկրտչյանն ու Նորայր Սահակյանը: Ներկայացնում ենք մրցող թիմերի կազմերը:

Հայաստան- Մայիս Ազիզյան, Կառլեն Մկրտչյան, Ռոբերտ Արզումանյան, Կարեն Դոխոյան, Ալեքսանդր Թադեւոսյան, Լեւոն Փաչաջյան (Նորայր Սահակյան, 74), Արվեն Մկրտչյան (Գեւորգ Ղազարյան, 82), Առարատ Առաքելյան, Արթուր Ոսկանյան (Կարեն Ալեքսանյան, 74), Հենրիխ Մխիթարյան (Առա Հակոբյան, 56), Սամվել Մելոնյան (Արթուր Եդիգարյան, 88):

Բելառուս- Ալեքսանդր Լենցեւիչ, եգոր Ֆիլիպենկո, Սերգեյ Օուիչ, եգոր Ֆիլիպենկո, Պավել Պլասկոնենի (Անտոն Պուտիլո, 46), Կիրիլ Պավլյուչեկ, Ալեքսանդր Կուլչի, Վիտալի Բուլգա, Գենադի Բլիզնյուկ (Նիկոլայ Օսիպովիչ, 46), Մաքսիմ Ռոմաշչենկո, Ռոման Վասիլյուկ (Սերգեյ Կոռնիլենկո, 67), Վլադիսլավ Գլեբ:

Դանիացի մասնագետ Յան Պոուլսենի գլխավորությամբ Հայաստանի հավաքականի հաջող մրցելույթները, ինչ խոսք, լավատեսություն են տրամադրել ֆուտբոլասերներին: Ուրախալի է, որ նոր գլխավոր մարզիչը ստ ոտ ընդհանուր «լեզու» գտավ ֆուտբոլիստների հետ եւ կարողացավ թեեւ ոչ օպտիմալ կազմով, հաղթանակներով նշանավորել իր նորամուտն ազգային հավաքականում: Նշենք, որ հավաքականում մինչ օրս աշխատած գլխավոր մարզիչներից միայն Սուրեն Բարսեղյանին է հաջողվել նորամուտը նշել երկու անընդմեջ հաղթանակներով: 1998-ին նա գլխավորությամբ մեր հավաքականը հաջողաբար հաղթել է Լիբանանի (1-0) եւ Անդորրայի (3-1) ընտրանիներին, ընդ որում վերջին հանդիպումը ընտրական էր: Ընդհանրապես, ՀՀ հավաքականին ստ հազվադեպ է հաջողվել երկու անընդմեջ հաղթանակ տոնել: Բացի վերը նշվածից, 2004-ին Միխայ Սեդլիգայի գլխավորությամբ մեր հավաքականը հաջողաբար հաղթել է Վրաստանի (2-0) եւ Թուրքմենստանի (1-0) հավաքականներին: Դե, իսկ ամենաարժեքավորն ու տպավորիչն անցած տարի Իան Պորտերֆիլդի գլխավորությամբ ընդամենը չորս օրվա ընթացքում եվրոդայի առաջնության ընտրական մրցաշրջանում Ղազախստանի (2-1) եւ Լեհաստանի (1-0) հավաքականների նկատմամբ տոնած հաղթանակներն էին:

Եթե այսօր Հայաստանի հավաքականին հաջողվի հաղթել նաեւ իսլանդացիներին, ապա հավաքականի պատմության մեջ առաջին անգամ մեր ընտրանին 3 անընդմեջ հաղթանակ կտոնի եւ մրցաշրջանի հաղթող կճանաչվի: Նշենք, որ Իսլանդիայի հավաքականը 2-րդ խաղում էլ պարտվել է՝ 0-1 հաշվով զիջելով Մալթայի ընտրանուն: Մրցակցի համաձայն, հավասար միավորների դեպքում նախ առավելությունը տվյալ է խփած եւ բաց թողած գնդակների լավագույն տարբերություն ունեցող հավաքականին, այնուհետեւ հաշվի են առնվելու խփած գնդակների հանակը, հետո էլ՝ անձնական հանդիպման արդյունքը: Այս ցուցանիշների հավասարության դեպքում տեղերը կբաշխվեն վիճակահանությամբ:

Սպասվում է, որ Իսլանդիայի հավաքականի հետ խաղում մեր թիմին կմիանան Ռոման Բերեզովսկին, Արսավազդ Քարամյանն ու Ռոմիկ Խաչատրյանը, որոնք կամրապնդեն ՀՀ ընտրանու կազմը: Հույս կա, որ իսլանդացիների հետ խաղում էլ արդյունքը դրական կլինի: Ամեն դեպքում, մեր հավաքականի խաղը եւ ցույց տված արդյունքը հուսադրող է: Հուսանք, որ մինչեւ սեպտեմբերի 6-ին Երեւանում Թուրքիայի հավաքականի հետ կայանալիք ընտրական մրցախաղը Հայաստանի հավաքականը կգտ ու պատասս կլինի:

Մրցաշրջանային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Հայաստան	2	2	0	0	3-1	6
2. Բելառուս	2	1	0	1	3-2	3
3. Մալթա	2	1	0	1	1-1	3
4. Իսլանդիա	2	0	0	2	0-3	0

Քառյակը շարունակում է պայքարը

Աֆրիկայի գավաթի խաղարկությունում հայտնի դարձան կիսաեզրափակիչի բոլոր մասնակիցները: Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում եգիպտոսի եւ Անգոլայի հավաքականների մրցավեճը: Երկու հավաքականներն էլ վերջին շրջանում նշանակալի հաջողությունների են հասել: Եգիպտացիները 2006-ին նվաճել են Աֆրիկայի գավաթը, իսկ Անգոլայի ընտրանին իր պատմության մեջ առաջին անգամ հանդես եկավ աշխարհի առաջնության եզրափակիչ փուլում: Ի դեմ, 2010-ի Աֆրիկայի գավաթի խաղարկությունը կայանալու է Անգոլայում եւ կարելի է վստահորեն ասել, որ դաշտի տերերը կլինեն հաղթողի գլխավոր հավակնորդների թվում:

Իսկ ահա Աֆրիկայի գավաթի ընթացիկ խաղարկությունում անգոլացիներն ավարտեցին ելույթները: Նրանց ճանապարհը կիսաեզրափակիչ փակեց ներկայիս գավաթակիր եգիպտոսի ընտրանին՝ հաղթելով 2-1 հաշվով: Քառորդ եզրափակիչի մյուս խաղում հաղթողին որոշելու համար հարկ եղավ լրացուցիչ ժամանակ նշանակել: Առաջին խաղակեսում կամերունցիները 2-1 հաշվով հաղթում էին թունիսցիներին: Սակայն վերջիններս հաջողվեց խաղավարից 9 րոպե առաջ վերականգնել հավասարակշռությունը: Լրացուցիչ ժամանակում բախտը ժպտաց կամերունցիներին: 92-րդ րոպեին Մբիայի խփած հաղթական գոլը ուղեգիր պարգեւեց կամերունի հավաքականին, որը կիսաեզրափակիչում վարը կմրցի Գանայի հավաքականի հետ: Նույն օրը կկայանա նաեւ Կոտ դ'Իվուար-եգիպտոս կիսաեզրափակիչ մյուս հանդիպումը:

ՍՊՈՐՏ

Հայ շախմատիստներից չորսն առաջատարների թվում են

Շախմատի «Սերոֆլոտի» մրցաշարի 3-րդ տուրում առաջատարներից մեկը՝ Ջավեն Անդրեասյանը, որ երկու անընդմեջ հաղթանակ էր տոնել, ոչ-ոքի ավարտեց պարտիան Բայադուր Ջորբավայի հետ: Ուժեղագույնների մրցաշարի մեր մյուս մասնակիցներից տուրը հաջող էր Կարեն Ասրյանի եւ Դավիթ Քալաբյանի համար, որոնք հաղթեցին համապատասխանաբար Պավել Պոնկրատովին ու Մախմիտ Ռոդեսայինին: Վլադիմիր Հակոբյանը հաշտություն կնքեց Կոնստանտին Ջեռնիհովի հետ: Նույնքիսի արդյունք գրանցվեց Հրանտ Մելիքյանի եւ Ալեքսեյ Ալեքսանդրովի մրցավեճում: Իսկ Յուրի Համբարձումյանը, Արաշես Մինասյանը, Ռոբերտ Հովհաննիսյանն ու Աղասի Ինանցը պարտվեցին: Ընդ որում Ինանցը 3-րդ անընդմեջ պարտությունը կրեց:

Հայաստանի շախմատիստներից բոլորից շատ՝ 2,5-ական միավոր են վաստակել Ջավեն Անդրեասյանն ու Կարեն Ասրյանը: 2-ական միավոր ունեն Վլադիմիր Հակոբյանը, Հրանտ Մելիքյանը, որոնք 4-րդ տուրում մրցելու են միմյանց հետ, եւ Դավիթ Քալաբյանը: Արաշես Մինասյանը, Ռոբերտ Հովհաննիսյանն ու Յուրի Համբարձումյանը վաստակել են մեկական միավոր: Մրցաշրջանային աղյուսակը 3-ական միավորով գլխավորում են Դմիտրի Սվեշնիկովը, Ալեքսանդր Որազանցեւը, Սերգեյ Վոլկովն ու Իգոր Նաումկինը:

Կանանց մրցաշարում էլինա Դանիելյանը ոչ-ոքի խաղաց Վահրա Կովանովայի հետ եւ վաստակեց 2,5 միավոր: Ռուսաստանցի Կարինա Համբարձումովան պարտվեց Իրինա Դոբրժանսկայային: Քնարիկ Սուրադյանն առավելության հասավ Անգելինա Գավրուշենկովայի նկատմամբ եւ վաստակեց 2 միավոր: Առաջին միավորը վաստակեց Մարինա Նազարյանը՝ պարտության մատնելով Դուլչա Վանխիկովային: Իսկ Տաթեւիկ Հայրապետյանը զիջեց Աննա Բուրասովային:

3 տուրից հետո աղյուսակը գլխավորում են յոթ շախմատիստուհիներ: 4-րդ տուրում էլինա Դանիելյանը սպիտակներով մրցելու է նրանցից մեկի՝ Եվգենիա Կուզեւանովայի հետ:

«Բ» խմբի մրցաշրջանում էլ բավական հաջող են հանդես գալիս հայ շախմատիստները: Նրանցից չորսը՝ Վահագն Խաչատրյանը, Վարդան Խոջոյանը, Տիգրան Գասպարյանը եւ Վարդան Մելիքոնյանը 3-րդ հաղթանակները տոնեցին եւ աղյուսակը գլխավորողների թվում են:

Մորիս Գրինը հեռանում է սպորտից

Ամերիկացի հանրահայտ առագավազորդ, օլիմպիական խաղերի ոսկե մեդալակիր, աշխարհի նախկին չեմպիոն Մորիս Գրինը հայտարարել է մեծ սպորտին հրաժեշտ տալու մասին: 33-ամյա մարզիկը նման որոշում կայացրել է հարկադրաբար վերջերս մարզումների ժամանակ ստացած վնասվածքի պատճառով:

Մորիս Գրինն աշխարհի եռակի չեմպիոն է (1997, 1999, 2001) 100 մ մրցաշարածությունում: 1999-ին Սեփիլիայում նա ուժեղագույնն էր ճանաչվել նաեւ 200 մ վազքում՝ դառնալով առաջին թեթեւաձեռը, որին հաջողվեց առագավազքում երկու մրցաշարածություններում էլ հաղթող ճանաչվել: Եվս մեկ ոսկե մեդալ այդ առաջնությունում Գրինը նվաճել էր ԱՄՆ-ի հավաքականի կազմում 4x100 մ փոխանցումավազքում:

2000-ի Սիդնեյի օլիմպիական խաղերում Գրինը 100 մ վազքում կրկին առաջինը հասեց վերջնագիծը, իսկ չորս տարի անց Աթենքում արժանացավ բronզե մեդալի: Իսկ 4x100 մ փոխանցումավազքում նա երկու օլիմպիադաներում դարձավ չեմպիոն ու արձաթե մրցանակակիր: 1999-ին Աթենքում ամերիկացի առագավազորդը 100 մ վազքում աշխարհի նոր ռեկորդ սահմանեց (9,79 վրկ)՝ 0,05 վրկ-ով առաջ անցնելով Դենովան Բեյլիից: Միայն 2002-ին Մորիսի ռեկորդը հաջողվեց գերազանցել Տիմ Մոնտգոմերին, սակայն հետագայում այն չեղյալ համարվեց, քանի որ մարզիկը մեղադրվեց արգելված խթանիչներ օգտագործելու մեջ:

Մորիս Գրինը բոլորից հաճախ՝ 52 անգամ 100 մ մրցաշարածությունը հաղթահարել է 10 վրկ-ից արագ: Յուրօրինակ ռեկորդակիր է 60 մ մրցաշարածությունում. 1998 եւ 2001-ին նա ցույց է տվել 6,39 վրկ:

2007-ի ընտրյալները հայտնի են

ՈւԵՖԱ-ի պատասխանատու ինտերնետային կայքէջում անցկացված հարցման արդյունքներով որոշվել է 2007-ի խորհրդանշական հավաքականը: Հարցմանը մասնակցել են 277985 ֆուտբոլասերներ, որոնք ընդհանուր առմամբ 3.750.000 ձայն են տվել լավագույն ֆուտբոլիստների օգտին: 2007-ի խորհրդանշական հավաքականի կազմն այսպիսին է. Իկեր Կասիլյաս («Ռեալ»), Դանիել Ալվես («Սեւիլիա»), Ալեսանդրո Նեստա («Միլան»), Տոն Թերի («Չելսի»), Էրիկ Աբիդալ («Բարսելոնա»), Քրիստիանու Ռոնալդու («Մանչեսթր Յունայթեդ»), Սթիվեն Ջերարդ («Լիվերպուլ»), Կակա («Միլան»), Կլարենս Ջեեդորֆ («Միլան»), Ջլատան Իբրահիմովիչ («Ինտեր»), Դիդիե Դրոգբա («Չելսի»): Լավագույն մարզիչ է ճանաչվել «Մանչեսթր Յունայթեդ» գլխավոր մարզիչ Ալեխ Ֆերգյուսոնը:

2006-ի համեմատ, 11 լավագույն ֆուտբոլիստների թվում իրենց տեղը պահպանել են միայն Սթիվեն Ջերարդն ու Կական: Ջերարդը 3-րդ անգամ է տեղ գրաղեցնում տարվա խորհրդանշական հավաքականում: Նա «Լիվերպուլի» միակ ներկայացուցիչն է: Իսկ Կական ամենաշատ ձայներ (220333) ստացած ֆուտբոլիստն է: 4 ֆուտբոլիստներ՝ Իկեր Կասիլյասը, Դանիել Ալվեսը, Էրիկ Աբիդալը եւ Ջլատան Իբրահիմովիչն առաջին անգամ են ընդգրկվել խորհրդանշական հավաքականում:

Չեմպիոնների գավաթակիր «Միլանը»՝ Կլարենս Ջեեդորֆը եւ Կական ներկայացնում են կենսունական պատասխանատու Ալեսանդրո Նեստան, ձախ կիսապաշտպան Կլարենս Ջեեդորֆը եւ հարձակողական ոգի կիսապաշտպան Կական: Նեստան նախկինում խորհրդանշական հավաքականում ընդգրկվել է 2002-2004-ին, իսկ Ջեեդորֆը նրան ընկերակցել է 2002-ին:

Իգոր պատրաստեց ԱՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

«Մե ծիծաղ, մե ուրախություն» խորհրդարանի դահլիճում

Նմանն զմանաս զսանէ

Ութ տասնյակ ոստգամավորները երեկ մեկ տասնյակից ավելի հաճախակի նգարեր, օրինագծեր ու դրանցում փոփոխություններ ընդունեցին անհարց-անոստասխան ատխատածնով, որը հատուկ է ՀՀ Ազգային ժողովին, բայց երեկ դրսևորումն այդ զգլխեց նախորդած բոլոր դեպքերը թերեւ: Ի վերջո նախորեին Աժ նախագահ Տիգրան Զորոյանը հարկ էր հաճարել «Ժառանգության» ներկայացուցիչներին հիշեցնել, «Որան ինչ ելույթներ լինեն, այնքան շատ հարցեր կհարցնեմ ընդունելը»: Հարցրեցին ու այնուհետեւ ավելի սպար կազմով ձեռնամուխ եղան ընթացիկ նիստի «բուն» գործառույթն իրականացնելուն, որը ոչ երկրի հիմնական, ոչ էլ այլ օրենքով ամրագրված չէ, բայց թելադրված է նախընտրական փուլով երկրի մթնոլորտի խիստ հաղթահարելիությամբ՝ փորձեցին գովաբանել Սերժ Սարգսյանին, բայց ավելորդ ջանքերը հակառակին հանգեցրին: 28 ոստգամավոր հերթագրվեց հայտարարությամբ հանդես գալու, սակայն «դարտը» տվեց միայն 24-ը, որոնցից 15-ը՝ ՀՅԿ, 3-ը՝ ԲՅԿ, 5-ը՝ «Ժառանգություն» խմբակցություններից եւ Վիկտոր Դալլաքյանը՝ որոնց անկախ ոստգամավոր:

Ու ինչեր հայոց լեզուն խորհրդարանում եզակի անգամ հարուստ, մեղ, գոգեթ... ՀՅԿ երիտասարդների փաղանգն ասելիք ներկայացրեց առաջադրանքին գերազանց տեղեկությամբ ընդունության ներկայացած ուսանողի պես, որը, սակայն, ընդունի խստությունից վախենալով հոխորտագին տոնը դարձնում է մարտավարություն եւ չի խուսափում լեզուն կամ զգելուց: ՀՅԿ ճաներ հրեանին էլ նույն գոտին էր, միեւ է, ավելի հանգիստ տոնով, սակայն նույնանման բովանդակությամբ ոստրասված տեքստեր կարդացին Գալուստ Սահակյանը, Գագիկ Մինասյանը, Դավիթ Հարությունյանը, տարբերվեց Համլետ Հարությունյանը խոսքը բանավոր ներկայացնելով, ի վերջո մասնագիտական խնդիր էր ներկայացնում: Ի զիտություն Լեւոն Տեր-Պետրոսյանի փաստեց, որ ասոտակցողները ողջ ոստմության ընթացքում Հայաստան երկրում ոչ մի դրական գործ չեն կատարել, հետեւաբար մեծ սխալ է ԼՏՊ-ի կողմից ներկայիս իշխանություններին թաքար-մոնոլոգների հետ համեմատելը: Ջեռի հետ նաեւ տեղեկացրեց, թե ոստմությունն ինչոիպի գիտություն է: Գագիկ Մինասյանը տնտեսական հաջողությունները ներկայացրեց. Արա Բաբայանը առողջապահության ոլորտում անելիքից խոսեց, Դավիթ Հարությունյանն անդրադարձավ էժանագին ոոոդուիզմ վաճառելու ժողովրդի համար ծանր հետեւանքներին, բայց, չգիտես ինչու, դրա ոստժելիության մասին խոսեց Արմեն Դանիելյանը, այն էլ ոչ հավաքանի դիրքից, իր խոսքերով, մարդկանց օգնելու մոլուցքով տարված թեկնածուն ոեսք է հիշի, ու հավարան ունենք անցնելու Ասսծո առաջ, իսկ այդ հավարանն էլ արդարացի է ու ոչ հանդուրժող: Հետո ՀՅԿ-ականների ելույթներում միակ համբերատար, հանդուրժող, ուղղամիտ, խիստ ոստասխանատու եւ իրատես թեկնածուն համարվեց Սերժ Սարգսյանը, եւ ելույթից ելույթ կրկնվեց, որ նա ի տարբերություն մյուս թեկնածուների գիտի դրախտը երկիր տեղափոխելու անհնարինությունն ու խոստումների ավելցուկով հանդես չի գալիս: Բարգավաճական ոստգամավորները հանրաոեական գործընկերներից ավելի ջանադիր գտնվեցին՝ Արամ Սաֆարյանը մեծ վստահությամբ խոսեց առաջադեմական բանակի ստեղծումն ու բարձր մակարդակից՝ հաղթությունը բանակի կրճատման գաղափարի հեղինակ Լեւոն Տեր-Պետրոսյանի, եթե չասենք ազգային, ապա գոնե ոչ հեռատես մտածողության: Նաիրա Զոհրաբյանը ներկայացրեց ՀՅ նախագահի ընտրությունների մթնոլորտը՝ ցուցադրելով ամերիկյան իրականությանը սեփական տեղյակությունը եւ ասելիք կառուցելով ի ոստասխանություն ՀՅ նախագահի կոալիցիոն թեկնածուի:

Անկախ ոստգամավորների կուսակցական ոստկանելությունից հայտարարությունները ոստրասված էին երկու մարտավարությամբ՝ հոխորտագին կամ ուսուցողական տոնով թերություններ, օրինագծերի ընդունում եւ հաջողություններ առաջադրելու: «Ժառանգություն» խմբակցության 5 ոստգամավորներն էլ անդրադարձան մեր երկրում ոստգամավորների գործունեությանը խոչընդոտելու, մարդու իրավունքների ոտնահարումների փաստերին, ցմահ բանտարկվածների խնդիրներին: Ստեփան Սաֆարյանի ելույթը եթերների ոստմություն էր. «Եթե իշխանության թեկնածուի հաղթանակն այլընտրանք, իսկ իշխանությունն էլ ընտրությունները կեղծելու ցանկություն չունի, ապա ինչո՞ւ են բազմաթիվ ձեռնարկություններում ու հանրաոեական տարբեր բնակավայրերում հավաքում անձնագրերը»: Եթե-ների ցանկի ավարտից հետո ոստգամավորը հայտարարեց, որ ընդդիմադիր թեկնածուների միավորման եւ որոշում կայացնողը լինելու հասարակության գիտակցության դեռոքում «Ժառանգություն» կուսակցությունն ու մյուս ընդդիմադիր հաղթական ուժերը ժողովրդի հետ կարող են տեր կանգնել մեր երկրի հաղթանակին եւ ապագային»:

Երկրին ու ապագային տիրություն անելու թեկնածություն ներկայացրած Սերժ Սարգսյանն ու Լեւոն Տեր-Պետրոսյանը իրենց թիմերով հանդերձ ամենայնս ջանում են որոնց այդոիսին միակը դառնալ հասարակության ընկալումներում: Եվ այդ մրցավազքում չեն էլ նկատում, որ դրսեւորում են խորագույն արհամարհանք հենց նույն ժողովրդի՝ ընտրողների հանդեպ: Ի վերջո, ո՞ւմ ապրեն են փակ կամ հիշողությունը մթագնած, որ չտեսնեն ու չիմանան իրականությունը: Այն է՝ մյուսի ոստիժը առավելագույնս իրականացնելու հարցում երկու առաջատար թեկնածուների հասարակության վստահությունը ստանալու օրեցօր ահագնացող փորձերը, որոնք զուգահեռվում են մթնոլորտը չարությունից զերծ ոստեղու դասակ կոչելով:

ՆԱՐԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հ.Գ. Խորհրդարանում տիրող իրավիճակը զվարճության հիմք էր ներկա ոստգամավորների համար եւ «մե ծիծաղ, մե ուրախություն» արտահայտությունն ամենից ճշգրիտ է փոխանցում խորհրդարանի երեկը:

Փլուզում

Փետրվարի 3-ին, ժամը 11.45-ին Ալավերդու լեռնահարստացուցիչ կոմբինատին ոստկանող հանի 5-ոտ եւ 6-ոտ հանքուղիները միացնող հատվածում տեղի է ունեցել փլուզում: Դեռքի վայր են մեկնել Ալավերդու լեռնափրկարարական առաջին եւ ոստիետային ջոկերը: Ժամը 14.30-ին 6-ոտ հանքուղուց դուրս է բերվել բանվոր՝ 1978-ին ծնված Արմեն Խաչիկյանը, որը վնասվածքներով տեղափոխվել է Ալավերդու հիվանդանոց: Ըստ բժիշկների, տուժածի վիճակը բավարար է:

Շրջված մեքենայից դուրս բերեցին մեկի դիակը եւ երկու վիրավորի

Փետրվարի 5-ին, ժամը 06.30-ի սահմաններում Առարատի մարզի Այնթապ գյուղի գերեզմանատան դիմաց «ՎԱԶ-21012» մակնիշի 09 ՍՍ 104 ոեգիստրացիոն համարանիշով ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի մասից եւ շրջվել: Դեռքի վայր մեկնած հրեշ փրկարարներն ավտոմեքենայից դուրս են բերել վարորդի՝ Առարատի մարզի Նոր Խարբերդ գյուղի բնակիչ Եռնիկ Մարտիրոսյանի դիակը եւ երկու ուղեւորի: Տուժածները տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Մասիսի հիվանդանոց:

Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԑՆ

«Էկոնոմիկա եւ Իրավունք» կենտրոն

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿԻՑ ՀԱՐԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԻՆ ԱՆՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Սեմինար-խորհրդակցություններ ղեկավարների և հաշվապահների համար
օրենսդրական պահանջներ, պարզաբանումներ և խորհրդատվություն, հարցերի պատասխաններ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Էկոտուրիզմն ու հանքարդյունաբերությունը կողք կողքի անհամատեղելի են

Եթե Հայաստանի ֆաղաֆէինության նախարարը 2003-ին մոռացության չտար իր իսկ ոստվերով «Հայ-նախագիծ» ՓԲԸ-ի նախագծած Սեւանի ազգային ոստկի հատակագիծը, Սեւանի ավազանն այսօր բոլորովին այլ տեսք կունենար, կունենայինք մի յմնող հանգստի գոտի՝ գոհացնող թե՛ մեզ, թե՛ զբոսաշրջիկներին: «Ցավոք, այդ նախագիծը մնաց ինքն իր համար, Սեւանն էլ կառուցապատվեց իր համար: Այն ժամանակվա ֆաղաֆէինության նախարարն այսօրվա բնապահպանության նախարարն էր: Ինձ համար հայտնություն էր, որ մեր ոեսության մեջ գտնվել են մարդիկ, որոնք հասկացել են այդ հատակագծի կարեւորությունը, բայց հետո որել են մի կողմ, մոռացության տվել՝ դուրս թողնելով կառավարման վերջնական ծրագրից: Ինձ համար այդ հատակագիծը շատ կարեւոր նշանակություն ունի, որովհետեւ այժմ մեր աչքի առաջ ունենք Դիլիջանի ազգային ոստարկը, եւ լավ կլինի չկրկնել Սեւանի տխուր օրինակը», զբոսաշրջության զարգացման մեջ էկոտուրիզմի դերի, հեռանկարների ու նեոդումների մասին «Ուրաթ» ակումբում երեկ հրավիրած ասուլիսում ասաց Հայաստանի էկոտուրիզմի ասոցիացիայի նշորեն **Ժաննա Գալյանը:** Էկոտուրիզմի զարգացման մեծ ռեսուրսներ ունեցող Հայաստանում, ըստ նրա, առնվազն միամտություն է միայն կրթական համակարգի վրա հույս դնելը, շուտափեթ արդյունքի հասնելու համար ոեսք է գործեն ֆինանսական ու կառավարման հասակ մեխանիզմներ: Բնության հուշարձանի ոստիպանումը տվյալ համայնքի համար չափազանց կարեւոր է դառնում հատկապես այն դեռքում, երբ մարդիկ զգում են իրենց կյանքի որակի վրա դրա ունեցած դրական ներգործությունը:

Հայաստանի առեւտրի եւ զբոսաշրջության զարգացման նախարարության զբոսաշրջության զարգացման բաժնի ոես **Արտեմասը** նշեց, որ վերջին 7 տարիներին Հայաստան այցելող զբոսաշրջիկների թիվը զգալիորեն աճել է. անցած տարի նրանց թիվը հասել է 510 հազարի, ավելացել է միջազգային չափանիշներին համապատասխանող հյուրանոցների թիվը, Հայաստանը ներկայացվել է միջազգային զբոսաշրջային շուկայում, առ այսօր կազմակերպվում են ճանապարհային այցեր, մասնակցում են միջազգային փառատոների, իսկ 2006 թվականից Հայաստանը գովազդվում է համաշխարհային հեղինակություն ունեցող Սի-էն-էն, «Եվրոնյուզ» հեռուստալիաներով: Մյուս կողմից, վիճակագրական հետազոտություններ են անցկացվում ձեռք բերած արդյունքները գնահատելու, այցելուների ատխարհագրությունը, սեռը, տարիքը եւ այլ տվյալները հավաքագրելու համար: «Այցելության նոյտակների մեջ 20 տոկոս են կազմում սոսկ հանգստի նոյտակով Հայաստան եկած զբոսաշրջիկները, ինչը լավ ցուցանիշ է էկոտուրիզմի համար: Մեր երկիրը տարածքով փոքր է, հետեւաբար զբոսաշրջային փաթեթը ներառում է գրեթե բոլոր տեսակները: Պատմամշակութային նոյտակներով Հայաստան այցելած զբոսաշրջիկը այցելում է նաեւ գյուղական վայրեր, լինում գեղատեսիլ բնության մեջ, այսինքն՝ տուրիզմի բոլոր տեսակները մեզանում միախառնվում են», ասաց նա, էկոտուրիզմի համար Հայաստանի ռեսուրսները գնահատելով բավարար լավ:

Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն **Կարեն Մանվելյանը** ոստմեց, որ Տաթեւի վանք տանող Սատանի կամրջի տարածքը խայտառակ աղտոտ վիճակում է եղել: Անցյած տարի իրենց հաջողվել է տարածքը բարեկարգել եւ մարել տեղաբնակ ու ֆրանսահայ երեխաների օգնությամբ. «Մարդիկ այնտեղ լողանում էին, հետո խորտված ոստրաստում՝ իրենցից հետո թողնելով հսկայական աղբակույտեր: Հիմա ոիկնիկի առանձին տեղ ենք տարել, 2 գյուղացու էլ նշանակել ենք տարածքի ոահապանններ՝ ատխատավարձով: Հեռագայում նրանք ոեսք է զբոսաշրջիկներին տոմսեր վաճառեն այնտեղ մտնելու համար, դա եկամուտի աղբյուր կլինի ոչ միայն իրենց, այլեւ համայնքի համար: Այս համակարգը կարելի է կիրառել Հայաստանի տարբեր վայրերում, նաեւ Գառնու ֆառերի սիմֆոնիաների հատվածում», ասաց նա: Զբոսաշրջության զարգացման ծրագրերը, նրա կարծիքով, կմնան թղթի վրա, եթե բարունակենք հանքարդյունաբերությունը կամ թունավոր որեւէ այլ արդյունաբերություն զարգացնել այն վայրերում, որտեղ տուրիզմի զարգացման մեծ հնարավորություններ կան, օրինակ, Նորավանքի, Տաթեւի կիրճերում: «Պետության մի ձեռքը հաճախ չի իմանում, թե ինչ է անում մյուսը: Մի կողմից հանքարդյունաբերություն են ուզում զարգացնել, մյուս կողմից՝ տուրիզմ: Դրանք իրար հակասող բաներ են: Տանկանում են Ճաղկաձորը դարձնել տուրիստական գոտի, բայց եթե այնտեղ այցելելու մտադրություն ունեցող արտասահմանցին ինտերնետից տեղեկանա, որ Ճաղկաձորի կողքին կա ցեմենտի գործարան, կիրաժարվի գալու մտից: Նա կգնա Գոտարուի, որտեղ օդը մաքուր է, առանց թունավոր նյութերի: Հայաստանն իրոք մեծ հնարավորություն ունի տուրիզմը զարգացնելու եւ էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերք սանալու, հետեւաբար ոեսք է շեշտը հենց դրանց վրա դնել, այլ ոչ հանքարդյունաբերության, որը մեր ազգին կբերի միայն թունավորում: Տուրիզմը երբեք չի զարգանում այնտեղ, որտեղ ոոչամբար կա»:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՐԳԵԼԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

«Հայաստանի հրեշ անվանգության մասնագիտացված ծառայություններ» իրավաբանական անձանց միությունը նոյտակահարմարության տեսանկյունից հայտնում է.

- երբեմ ուսարտ գազի օգտագործման ժամանակ.
- արգելվում է օգտվել ջրատաքացուցիչից եւ ջեռուցման սարքից հետադարձ հարի, կամ հարի բացակայության դեռքում, հանի որ այդ ժամանակ առաջանում է օձոց գազ (CO): Շինությունում օձոց (CO) գազի 0.4-0.5% ածխայության դեռքում 10-15 ոոոքի ընթացքում մարդ մահացու թունավորվում է:
- Վառարանի լուցկու բոցը մոտեցնելով ջրատաքացուցիչի կամ ջեռուցման սարքի վրա օդի ներհոսքի համար նախատեսված բացվածքին՝ սուզքի հարը ծխասում: Նորմալ հարի դեռքում բոցը շեղվում է դեռքի զազասարքի, իսկ հարի բացակայության դեռքում այն չի շեղվում:
- Գազասարքի երկարաեւ օգտագործման ընթացքում անհրաժեշտ է հաճախակի օդափոխել շինությունը:
- Ծնանը ծխասարքի սառցակալումը եւ խցանումը բացառելու նոյտակով անհրաժեշտ է հաճախակի սուզել դրանց գլխամասերի վիճակը:
- Խորհուրդ չի տրվում օգտվել ջրատաքացուցիչներից ուշեղ հանքերի, բաձր մառախուղի եւ ցաղկա առավել շոգ եղանակների ժամանակ:
- Գազի ջրատաքացուցիչներից կամ ջեռուցման սարքերի միացումը ծխասար ուղղելն անհրաժեշտ է կատարել ոչ պակաս 1 մմ հաստություն ունեցող գազասարքի ծխասար կարճախողովակի տաճարներից ոչ պակաս թիթեղյա խողովակներով:

Հոդվածը ընթերցելիս այն ընկալել նոյտակահարմարության տեսակետ:
«Հայաստանի հրեշ անվանգության մասնագիտացված ծառայություններ» իրավաբանական անձանց միության խորհուրդ
Ոչ պաշտոնական հրատարակում

Փետրվարի 9-ին եւ 10-ին ժամը 17.00-ին Երեւանի «Դինամո» մարզադահլիճում տեղի է ունենալու Ուուրի Հայաստանի առաջնությունը: Մուտքն ազատ է:

ՕՐԱՎԱԳԻՐ ՀԱՄԱՐ ՅԱՆԳՆԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լուսանկարները գործունեությունն իրականացնող «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Ցուցակների պատասխանատու, գլխ. խմբ. Խաչիկ Սեդրակյան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 5.02.2008, գինը՝ 100 դրամ, տպագրվել է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արտակունյաց 2: